Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

հեռ
1983

1999

1001

# ԴԱՒԻԹ ԲԷԳ

ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԴԱՒԻԹ ԲԷԳԻՆ, ԵՒ ՊԱ-
ՏԵՐԱԶՄԱՑ ՀԱՅՈՑՆ ԽԱՓԱՆՈՒ. ՈՐՔ ԵՂԵՆ ԸՆԴ
ԴԷՄ ԹՈՒՐՔԱՑ Ի ՄԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԻ, ԱՅՆ Է
ՑԱՄԻ ՏԵԱՌՆ 1722, ԵՒ ՀԱՅՈՑ 1171:

Զօրս երգոյն գրել, որք խաչքեանէ մինչև ցը-
վախճան յառաջադրեալ լեալք էին յանձնութիւն պա-
տերազմաց, և անմանութեա երգոյն եղելոց,
այսինքն Աստեփաննոս Վարդանեան, որ է
ծառայէն էր Շամախեան, ի գաւառէն քոտը
Աղանեաց, և յառանցն Նախատեանց, և այլ
ամենք ընդ նմա,

. . . . . . ՎԱՐԴԱՊԵՏԻ . . . . .

Հրատարակութեամբ ի լոյս ընծայեաց
ՀԱՆԴԵՐՁ ՑԱՒԵԼՈՒԱԾՈՎՔ
ԱԲԳԱՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

им. А. Мясникяна

ՌՅԻ — 1871
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ:
Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ:

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՅ Դ.
ՎԵՀԱՓ. ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

41983-ա
3β. 1991

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՒՈՅ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ (Ի ՆՑԱՅՏԱՑԵԱԼ) ԲԱԶՄԵՐԱԽՏ

# ՀՕՐՆ ԻՄՈՅ

## ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

---

Ա՜խ իմ Հայր
Ո՛րտեղ արդեօք անյայտացար,
Ո՞րտեղ մնաց քո անուն,
Մի՞թէ այդ էր ճակատագիրդ,
Որ զոհուեցիր դու անմե՜ղ։
Ա՜խ իմ Հայր
Վերջին համբոյրդ սիրալի,
Որ գգուելով մեզ տուիր,
Չենք մոռանալ, միշտ յաւիտեան
Մենք կը յիշենք քո անուն։
Ա՜խ իմ Հայր
Վեհ էիր ինչպէս մեզ համար,
Վեհ էիր նոյնպէս և բազմաց,
Առատաձեռըդ միշտ պատրաստ
Գթած էիր աղքատաց։

Ա՜խ իմ Հայր

Ես չեմ կարող նկարագրել
Քո գովանի գործքերդ,
Թո՛ղ յիշատակեն այդ նոքա
Որոնց առաւել է յայտ:

Ա՜խ իմ Հայր

Վերջապէս Դու ո՛վ Նայելի՝
Մեզ ողբալով թողեցիր,
Մեր գթառատ և անգին Մօր
Սիրտը ա՜խ կրակեցիր:

Ա՜խ իմ Հայր

Մեր մօր հետ նաև թողեցիր
Քո սիրասուն հինգ որդւոց
Մեծ սգոյ մէջ և տրտմութեան,
Սրտներս ո՜հ մաշեցիր:

Ա՜խ իմ Հայր

Ո՛վ գթառատ դու սիրելի,
Ա՜խ երկնքից մեզ օրհնի՜ր,
Ների՜ր նա և աղաչումեմ
Ողբալո՜վ, երախտապարտ
Քո անդրանիկ

ԱՏԳԱՐԷՏ

1870 ին Նոյեմբերի
յԵրևան:

ԻՐԲԵՒ ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ:

---

Ի՞նչպէս քաղցր է և ո՜րքան գեղեցիկ, մի ազգի զգայուն սրտերի համար, որոնք տեսնելով իրենց անցեալ դարերի եղբարց քաջագործութեանց նկարագրութիւնը... Այսօրուան օրս, ամեն մի երևելի ազգ՝ վսեմութեամբ պարծենումեր իւր սիրելի նախնիքներից աւանդուած պատմութեանց վերայ. ամեն մի զգացող սիրտ, իրեն ճանաչած օրից, սկսումէ նախ և առաջ՝ տեղեկանալ իր պապերի, Հայրերի, Մայրերի, եղբայրների և քոյրերի, անցեալ դրութեանց վերայ, ահա ինչպէս Ամերիկայի մէջ, որոնց ժողովուրդը՝ բոլորն էլ ուսեալ, կրթեալ և ազատասէր մարդիք են. նրանց մէջ, մանուկին ութ տարեկան հասակը դեռ չմտած, ընտանեկան խաղ ու պարի մէջ, արդէն իրենց ազգային պատմութիւններն են սովրեցնում, իրենց ամեն

մի զուարճութեանց մէջ ազգային անցքե-
րը հէքեաթի նման են սովրեցնում իրենց
զաւակներին, և սորանով է, որ նոքա ժա-
մանակին լուսաւորեալ և յառաջադէմ
ազգեր են լինում (որովհետև մատաղ հա-
սակի մէջ ազգասիրութեան և ընկերասի-
րութեան սերմեր են ցանում)։

Մեր ազգը ևս զուրկ չէ իւր ազգային
պատմութիւններից, բայց զո՜ւրկ է ա՜խ,
նորան գործակիցներից, որովհետև ամբողջ
մի ազգը ի՞նչ պիտի անի մի քանի անհատ-
ներով*) ինչպէս որ կգրէ նաև ազգիս բազ-
մաշխատ անմոռանալի Խաչատուր Աբով-
եանը, իւր ''Պարապ վախտի խաղալիք,,
գրքին մէջ յէջ 97, այսպէս, իւր բայա-
թիների մէջ։

''Ա՛խ Անի, Անի, Անի,
''Քանդողիդ տունը քանդվի
''Քեզ որ ազգը չպահեց
''Մէկ սուգ անողն ի՞նչ անի։''

Ահա այսօրուան օրս որ ամէն լուսա-
ւորեալ ազգերը մե՜ծ մտածմունքների մէջ

*) Մի խնջոյքում կամ մի հարսանիքում,
ի՞նչ պիտի անեն մի երկու ծափ տվողները։



են, բոլորը ընթերցանութեան հետ ընկած
գի՛րք, գրութի՜ւն, օգտաւէտ գո՜րծ և յա-
ռաջադիմութի՜ւն են գոռում, ամեն տեղ
Դպրոց*), Ընթերցարան, Ազգային Խոր-
հրդարան և ազգային բարեկարգութիւն-

*) Մեզանում (Ռուս. մէջ) Դպրոցներ յի-
րաւի շատ այժմ . . . . Ահա թողնելով միւսները
վեր առնենք սէմինարեայքը—ես ինքս պատահած
եմ մի քանի Հոգևոր Սէմինարեայքի, չեմ ու-
զում բացայայտել, ընթերցողը ինքնին կարող է
նշմարել թէ ի՞նչ դրութեան են նոքա։ Երանի՜
էր մեզ, որ մերոնք հասկանային այդ Սէմինարեայ-
քի ունեցած բարձր իրաւունքը և մտածէին նոցա
բարեկարգութիւնները, որ աւուր դէպի առաջ
տանելով նորա քայլերը։ Այս տեղ կարծեմ մենք
պիտի լսենք մի քանի անմտածող սովորական մըտ-
քերի ձայներ, ''թէ Վեհափառ Կաթուղիկոսը չի
հետևում, լաւ.. հոգևորականներ չկան, բոլորն էլ
իրանց համար են մտածում և.լն'' իսկ մենք կպա-
տասխանենք այդ սովորական ծուռ մտածող մըտ-
քերին, թէ Վեհափառ Կաթուղիկոսն ի՞նչ անի,
փա՜ռք Աստուծոյ, սրբազնասուրբ Հայրապետը ա-
մեն կերպ մտածում է ուսումնարանաց բարգաւա-
ճութեան համար, մինչև անգամ որ եկեղեցեաց
և երևելի ուխտատեղաց արդիւնքները ևս բարե-
հաճեց շնորհել տեղւոյն ուսումնարանաց, էլ ի՞նչ

ներ են հաստատում. բայց մեր ողորմելի ազգը ոչ թէ մտածում, կամ մտածումն ունի կատարելու. այլ մինչև անգամ երազում էլ չեն ուզում տեսնել ա՜խ.... Ի՞նչ է արդեօք սրանց փրկարար զօրութիւնը:

---

անի, ասացէք խնդրեմ, ամեն տեղ հրամայեց օրիորդաց ուսումնարաններ հաստատել, ևն ևն, ամեն տեսակ ուսումնական հոգսերը մտածում, գոհութիւն Աստուծոյ, միշտ հանդարտութեամբ և խոհեմութեամբ սկսելով պէտք է գործ տեսնել: Վերջապէս այժմ մեր յոյսը Ազգիս ուսումնական Հոգևորականների ու գերապատիւ եռանդոտ փոխանորդների և յաջորդների և վերջապէս Ազգիս ուսանող անհատների վրայ է, սրանք պէտք է մեր ուսումնակարօտ ժողովրդոց ծարաւը լցուցանեն — սրանք պէտք է աշխատեն և սրանք պիտի հոգան. և ոչ թէ մի քանի ինքնահաւան և մեծախօս մարդիք. բայց սրանց էլ ձեռնտուութեամբ և օժանդակութեամբ պէտք է օգնեն մեր ի սրտէ սիրելի և յարգելի ժողովուրդը: Ժողովուրդ, հոգւոյս մէջ պատուելի ժողովուրդ: Դուք մե՛ծ իրաւունք ունիք անելու ի՞նչ չէք կարող անի: Ձեզ միմիայն մէկ արգելառիթ ունիք, այն է Սէր և միաբանութիւն. երբ որ այս սէրը, միաբանութիւնը, համաձայնութիւնը և ընկերասիրութիւնը ունենաք, յայնժամ ամենայն ինչ կատարեալ է:



Հայաստանի կեդրոնի մէջ անգամ, համարեա թէ, բոլորը զուրկ են կարդալուց, 1000, Հայի մէջ հազիւ գտնես 50 մարդ, որ ճանաչեն գոնէ, թէ ինչի՞ համար եկած են աշխարհ, ի՞նչ է Հայը, ո՞վ է եղել նորա Ազգատոհմը, ունեցե՞լ են արդեօք մի իշխանութիւն, ունեցե՞լ են կարգ ու կանոն. ի՞նչ կրօն են ունեցել նոքա, ո՞վք են եղել նոցա լուսաւորիչքը, ունի՞ն ազգային պատմութիւն — ինչի՞ համար է արդեօք ազգի պատմութիւնը.... ա՜խ... և վերջապէս ինչի՞ համար է պսակվել — ի՞նչ պարտականութիւն ունի կինը ևն ևն:

Այսօր մի ուրիշ ազգ՝ եթէ պատահմամբ հարցնէ մեր Հային իւր ազգի վրայ, մի երկու խօսք — չունի նա պատասխան, և կամ մի անուղիղ փաստով, եթէ վստահանէ, նա և՛ս լուռ է և իբրև համր սառած: Ես ինքս պատահած եմ ուղղակի այս հարցին, բայց գոհութիւն Աստուծոյ, որ կարողացել ենք ջրել նոցա խօսքը մեր կարողութեան չափ, վերջապէս փառք նախախնամութեանը որ գոնէ փոքր ինչ ծանօթ ենք մեր Ազգային և սուրբ Եկեղեցւոյ

պատմութեանց հիմքերին (որ ամեն Հայերի համար սրբազան պարտականութիւն է), թէ ոչ, ամօթով լցուած իբրև փայտ, պիտի լռէինք նոցա առաջ, և այն ժամանակը ինչ շանթեր որ ածէին, պարտ էր ինձ լռել, իսկ նոցա բարբառել:

Ահա այսպիսի հարցերը և ուրիշ պատահմունքները, որոնք մեր առաջին միշտ և համարեա թէ, ամեն վարկեանում պատրաստ են ու մեծ փորձանքի առիթ կարող են լինել ապադայում. Եթէ այսպէս ընդհանուր ազգիս օգուտը անմտածել ու մընան, նա մանաւանդ՝ այժմ որ ամեն թակարթներից պատրաստ պէտք է պահենք մեր անձը, մեր Ս. Կրօնը և մեր Ազգութիւնը... այս միայն ասելով՝ որ մեծ ըզգուշութեամբ պէտք է այժմ դաստիարակել մեր գաւառուկ զաւակները, որ ապագայում Հայերի այգիները պտուղներով լցնեն:

Ահա այս վերոյիշեալ նպատակով և եռանդով մեր ամենասիրելի ընդհանուր հասարակութեան օգտի համար, հրատարակելով ի լոյս ենք ընծայում այս եր-



ջանկայիշատակ ''Դաւիթ բէգին Սիւնեաց Պատմութիւնը'' հանդերձ հետևեալ և մի քանի փոքրիկ յաւելուածովք, այն է, Ա. ''Լևոնի Զ. արքային Հայոց'' մահուան վերայ մի քանի տեղեկութիւնքը, Բ. ''Հնդեքին Հարուածք Տփխիսայ'', Գ. Ողբ ի վրդովմանն Հայաստանի, Դ. ''Ազգային վիճակի դիտողութիւնը և նորա յառաջադիմութեան և լուսաւորութեան համար խորհրդածութեամբ մտածմունքը'':

Ազատելով ահա այս ձեռագիր ազգային յիշատակարանը փոշալի անկիւններից և մաշող ժամանակի ժանիքից, ու նուիրելով մեր սիրելի ազգայնոց, չենք կարող լռութեամբ անցնել՝ այս հետաքրքրական և միանգամայն ուշադրութեան արժանի պատմութեան վրայ, որի գրիչը համարեա թէ՝ Ս. Թարգմանչաց Ոսկեղէնիկ դարու ճաշակն է կրում, և համարեա մի նոր Ս. Եղիշէ է հանդիսանում Սիւնեաց նորնահատակների համար, (որպէս կտեսանեն ընթերցողք,) չնայելով՝ թէ պատմագիրը վերջին դարերի ծնունդ է:

Եւ ո՛չ չափու զարմանալով հիանալ սորա մէջ պարունակուած խորին իմաստութեամբ քաջագործութեանց վրայ, և կամ ի՞նչ ընթերցող չափու զուարճանայ սորա ոճի քաղցրութեան վրայ։

Բայց ցաւումենք շատ, որ չկարողացանք գտնել այս ազնիւ Պատմագրութեան բուն հեղինակը, պատճառ անխոհեմ և անզգայ մարդիկ անհետացրել են սոյն ազնիւ հեղինակ վարդապետի անունը, ջնջելով նորա անունը և տոհմանունը միմիայն Վ. արդապետ բառը թողլով, ինչպէս մենք ևս թողացինք ահա՛, որի համար շատ տեղեր և պատմագրութիւններ փնտռելով չկարողացանք և ո՛չ մի տեղ գտնել ծանօթութիւն ինչ գտնել։

Մեծ պարծանք է վերջապէս մեր ազգին, որ այսպիսի ազնիւ յիշատակարանները ի լոյս աշխարհ հանելով հարստացնել ազգային գանձարանը։

Վերջապէս և մեր պարտականութիւնը, այս գրքի մասին չենք խնայել ինչքան որ կարողացել ենք կատարելու, որ որոնելով և հետաքրքրելով քանի մի յուսալի



տեղերում, գտանք ահա՛ այս ամենաստոյգ օրինակը, ի վերջոյ որքան կարող էինք կատարեցինք։

Մեր բաժանորդագրութեամբ ի լոյս ընծայելը ուրիշ բան չէր, եթէ ոչ որքան կարելի էր շուտով հրատարակել այս գիրքը, մտցնելով միանգամայն մեր եղբարց և քերց գոքը*), որի փոխանը հոգւով փափագումենք և սրտով ցանկանում, որ մեր սիրելի ժողովրդեանը առ հասարակ ծանօթ լինի և օգտակար։

Մեր ամենակերպ աշխատութիւնը և ջանքը, մեր իրաւասէր խեղճ հասարակութեան եղբարցս և նրանց գաւնուկ զաւակների օգտին համար է. որոնց ցանկանումենք ամենակերպ հնարքով՝ ցոյց տալ ընթերցանութեան ամենակարևորութիւ-

*) Երանի թէ, բոլոր մեր ուսումնական նորատիպ մատեանքը, որոնք որ այսուհետև պիտի տպուին, այս եղանակաւ սկսուէին հրատարակութիւնքը այսինքն բաժանորդագրութեամբ. պատճառ. գրքեր եմք տեսնում այժմ, որ 10—20 տարի կայ տպուած. բայց մեր ձեռքը չէ հասած նոր ենք ահա ծանօթանում... վա՜յ մեզ։

նը և նորա քաղցրիկ ճաշակը, որով, որ ժամանակին երևելի մարդկանց դասը պիտի դասուին :

Ահա վերջանալու վրայ է տողերիս թելը, որ յայտնումեմ հրապարակի դատաստանի առաջ՝ մեր սրտի խորին ջերմ շնորհակալութիւնները, այն փառաւոր և վեհ անձանց, որոնք բարեհաճեցին ստորագրել տալ այդ բաժանորդաց, անտես չառնելով մեր վստահութեամբ ուղարկած յայտարարութեան թերթերը, ի Շամախի Գեր. բարձր Արքազան Անդրէաս Արքեպիսկոպոս Ս. Հօրը, և մեծապատիւ Յովհաննէս Միրզաբէգեանցին, ի Գրիգորապօլ արժ. Դաւիթ Ա. քահ. Շահինեանցին, ի Վան, մեծ. Յակոբոս Արուանձտեանցին, յԱգքիրման, արժ. Աբրահամ քահ. Մարութեանցին, ի Բագու, արժ. Թադէոս Ա. քահ. Բուդաղեանցին մեծ. Սարգիս Վարշամեանցին և Յաբէթ Տէր Յակոբեանցին, յԱստրախան, մեծ. Ստեփաննոս Ջանումեանցին, Ի. Թ. Խ. Շուրայ, մեծ. Աբիսողոմ Տէր Մելքսէթեանցին, ի Տփխիս, մեծ. Յովսէփ Խորումեանցին. ի Գարբանդ մեծապատիւք Գէորգ Շ. Գէ Շահփուրին և բժիշկ Սողոմոն Սարատովին. յԱխալքալակ, մեծ. Աղէքսանդր Բարսեղեանցին, յԱղէքսանդրապօլ, մեծ. Սիրական աղա Գորոյեանցին: Ի Շուշի, մեծ. Մարկոս Բահաթուրեանցին: Ի Լանքարան, արժ. սարկաւագ Ստեփաննոս Տէր Ստեփանեանցին: Ի Ս. Անապատն Սևան, արժ. Տիրացու Գրիգոր Տէր Գրիգորեանցին, յԱխալցխա, մեծ. Ստեփաննոս Արաբաջեանցին, ի Նախիջևան Հին, մեծ. Ստեփաննոս Աւետիքեանցին: Ի Ջուղայ, մեծ. Առաքել Վարդապետեանցին : Ի Շահթախտ, մեծ. Միքայէլ Ադիբէգեանցին: Ի Քանաքեռ գիւղն արժ. Ներսէս քահ. Մանուէլեանցին. յԵրևան՝ Մեծապատիւք Սիմէոն վարժ. Փիլիպպոսեանցին և վարժ. Բաղդասար Տէր Յովհաննէսեանցին :

Երջանիկ կլինեմ, եթէ այս մեր Բ. *)



---

*) Առաջին հրատարակութիւններս էր «Նոր Տաղարան կամ Ազգային Երգարան» ծաղկաքաղ հին և նոր գործածական տաղերից և երգերից, տպեալ ի Մոսկուա 1866 ամի, փոքրիկ 58 երեսէ

աշխատութեամբ հրատարակութիւնը մեր-ազնեայ ժողովրդոցը հաճելի լինի, որով պիտի խրախուսեն մեզ սկսել և ուրիշ հասարակական օգտի համար հրատարակութիւնները, որոնց համար աղօթումենք և մաղթում դէպի ՚Նախախնամութիւնը, որ նոցա քայլերը արագ ընթանան և դէպի յառաջ միշտ դիմեն :

Մնամք Ազգիս հաւատարիմ Անդամոցը
միշտ սիրող և յարգող
Աբգար Ս. Գուլամիրեանց :

---

բաղկացեալ՝ հանդերձ երաժշտական խաղերով: Մեր բուն նպատակը և բարենախանձութիւնը սա չէր, այլ մենք մեր սրտի ցանկութեան համաձայն աշխատասիրեցինք բաւականին հարուստ ճոխացուցեալ՝ հանդերձ եռանդուն և սրտառուչ սրտի երգերով: Բայց դժբաղդաբար մի քանի արգելառիթ պատճառով սկսել էին այսպէս տպագրել. յանկարծ ստացայ և տեսայ, որ մեր հարուստ Երգարանը կիսով չափից եւ պակաս է տպագրուած, էլ ի՞նչ....



## ԳԼՈՒԽ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Թէ վասն էր, և կամ որպէս էին եմուտ Դաւիթ Բէգն ի Ղափան գաւառ: Եւ որպէս զինեալ ելին միաբան ընդ նմա ամենայն բնակիչք գաւառին, և ընդդէմ պարսկան Թուրքաց:

Ի ժամանակին՝ յորժամ զօրացան ազգն Աղուանից Թուրքաց՝ ի կողմանս Հնդկաց՝ ի Ղանդահար գաւառին, և յարձակեցան յաշխարհն Պարսից ասպատակաւ աւար հարկանել, մինչև ի գալ՝ պաշարել նոցա, և առնուլ իսկ զԱսպահան քաղաք, և սատակել զՇահ Հուսէին արքայն Պարսից, որ եղև յամի Տեառն 1721, և ի Թուականութեան Հայոց ՌՃՀ (1170):

2. Զայսու ժամանակաւ Լակզի Թաթարքն ի կողմանցն հիւսիսոյ ի Հայս և ի յԱղուանս արշաւեցին. և զգիւղօրէն Գեանջայու, և Շամախու ասպատակեալ

ւար հարկանէին, և զԵգուլեցի Մուսաբէգեան տոհմէ զիշխանն Շամախու, ի մահ մատնէին, և զամենայն զօրաւոր դիմակացսըն առ հասարակ սատակէին, և զժողովուրդս երկրին զկանայս, և զմանկունս ի գերութիւն վարէին, զորոց մի ըստ միոջէ յայամ վայրի չունիմք պատմել ։

3. Եւ կամ թէ զինչ զայսչափ չարիս տեսեալ Հայոց բնակչացն Գուգարացւոց, և որք շուրջ էին բնակիչք Հայոց, զինու զարդու յօրինեցան, ի մարտ պատրաստեցան միահամուռ. Ճակատեալք առ Թաւաթառ գետովն ընդդէմ ամենայն արձակելոցն ի յասպատակութիւն երկրի իրեանց (որք և զանուն առին այսու, և կոչեցան մինչև ցայսօր մեծ Սղնախ)։

4. Եւ թէ որպէս քաջացան սոքա, հարին վանեցին թէ զԼակզին, թէ զՊարսիկն և թէ զՕսմանցին, ոչ ունիմք գրել. այլ միայն զխմբելոցն Հայոց ի յԵօթնաբերդ գաւառին Խափանու եղելոցն ձեռնարկեմք պատմել ։

5. Յամին հազարերորդի եօթանասներորդի առաջներորդի Հայկազեան Թուա-



կանի, յորժամ լուան բնակիչք Եօթնաբերդ գաւառին Խափանու զասպատակն, և եւ աւերումն Գեանջայու և Շամախու, Հայք, և Պարսիկք առ հասարակ խռովեցան, և զահի հարեալ, սասանեալ, տագնապէին, և իբր ամիս երկու, կամ երեք երթ և եկս առ միմեանս առնել յիրերաց կասկածէին, զի զանձինս իւրեանց առ հասարակ ի խնամոց յընդհանուր ընտանի խնամակալութենէ լքեալս տեսանէին ։ Վասն այսորիկ քաղաք ի քաղաքէ, ազգ յազգէ, իշխան յիշխանէ, կասկածանս թշնամութեան կրել տագնապէին, և զայնպիսի աղէտս չարեաց, և սոքա կրէին ։

6. Արդ ի սոյնպիսի աւուրս դառնութեան սասանութեան Ստեփաննոս անուամբ ոմն ի մերազնեայց ի կողմանցն Կալերու՝ Վանքեցի, խորհուրդ ի մտի դնէր, անցանէր ի Սիսական գաւառ, և երթալ հասանել յաշխարհն Վրաց, ի քաղաքն Մցխէթ առ Շահնաւազ իշխանաց իշխանն Վրաց, և խնդրել ի նմանէ զայր մի տալ երկրին Խափանու ի զօրագլուխ, և հրաման տալ նմա զօրաժողով

լինելոյ, և զերկիրն ի թշնամեաց պահելոյ։

7. Զի զայս ոչ ոք ի սովականացն իւրովի առնել համարձակէր, և թէ առնիցէր ոք իբրև ապստամբ ի տէրութենէ մերժիւր ի ժողովրդենէն։ Այլ իշխանն Վրաց մեծ էր. և զայսպիսի զօրագլուխ յայնմ գաւառի կացուցանել նմա անկ էր։

8. Իսկ եթէ որում մարթասցի զհայցուած իւր առաջի իշխանաց իշխանին արժանաւոր ցուցանել, խորհեցաւ գիրս յանուն յիսուն արանց Տանուտէրանց Խափանու յօրինել, և ըստ նմանութեան իւրաքանչիւր կնքոց նոցա զկնիքս քանդակել, և զայն գիր նոքօք կնքեալ հաստատել։

9. Եւ զօրութիւն բանիցն հայցուածոց հրովարտակին էր այսպիսի ինչ։ "Տուր
"մեզ զայր մի լինել զօրապետ, որպէս զի
"քոյին հրամանաւ լիցի մեզ այս օրինա-
"ւոր, և մեք զզօրսն հոգամք պատրաս-
"տել, և նոքօք զգաւառն մեր ի թշնա-
"մեաց աներկեան առնել"։



10. Եւ գնաց Ստեփաննոս, և եհաս ի Մցխէթ քաղաք, յանդիման եղև իշխանին Վրաց, և գոյժ տուեալ նմա՝ յաղագս նախայիշատակեալ քաղաքացն աւերման՝ պատմեաց նմա և զամենայն վտանգս և զխռովութիւնս, և զզահն և զերկիւղն ժողովրդեան Խափանու, և մատոյց նմա զհրովարտակն, զոր արարեալն էր յանուն Տանուտէրանցն։

11. Հաճոյ թուեցաւ իշխանին հայցուածն, զոր յանուն նոցա հայցէր. և կոչեալ զԴաւիթ բէգն Սիւնեցի ի Հայկազեանս տոհմէ, ետ նմա զիշխանութիւն երթալ յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Խափան, զօրաժողով լինիլ անդ, և պահել զերկիրն Հայոց։

12. Եւ նա յերեսաց իշխանին Վրաց, և եկն եհաս յաշխարհն Սիւնեաց յամի Տեառն 1722, և ի թուականութեան Հայոց 1171. և բնակեցաւ ի սահմանս Սիսական գաւառին, ի գեղեցիկ դաշտավայրի անդ, մերձ ի բլուրն Երէք-դադաթեան, որ ի յայլասեռից կոչի Ուչթէփէ։

13. Եւ ինքն Դաւիթ էր ազնուական, բարեպաշտ, արդարակորով, ծանօթ գրոց, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւք և գործովք, և վրէժխնդիր թշնամեաց Ազգին մերոյ, ինքն և ամենայն հետևողք իւր: Իբրև եղանէր յերկրէն Վրաց, առ նա ժողովէին ի Հայոց ամենայն արք զօրութեանց յամենայն կողմանց գաւառին որք լսէին զնմանէ, արք իբրև չորեք հարիւր. որք նեղեալք և տառապեալք էին ի դառն ծառայութենէ այլազգեաց, ա՛րք որք զանձինս իւրեանց եդեալք էին առ ի ազատ լինելոյ ի լծոյ ծառայութեանն այլազգեաց, ա՛րք որոց մինն հալածէր զհարիւրս, և երկուքն զհազարս:

14. Արդ՝ զառաջինն հարկանելով եհար Դաւիթ զՎարաչօղլու կոչեցեալ Թուրքն ի յՄուշլթէփէն. և ապա անտի չուեաց գնաց, և բանակեցաւ ի յամուրն, որ կոչի Հայրաշէն կամ Շինուհայր:

15. Եւ կոչեալ առ ինքն զԱռաջնորդն Տաթևու, պատմեաց նմա, թէ յի՞նչ բանրս, յի՞նչ խորհուրդս եկեալ է. և ասէ, ջնջելով ջնջեցից զամենայն այլազգիս յերկ-



րէ աստի յայսմանէ. և ժողովեաց առ ինքն զարսն ի Հայրաշէն, և եհար ասպատակեաց զգիւղօրէսն Թուրքաց. և ժառանգեաց զստացուածս նոցա:

16. Իբրև զայն տեսանէին երեսուն և երկու Ղփանշէր կոչեցեալ ցեղն Թուրքաց, ի միասին գային, ժողովէին գունդ կազմէին, և դիմէին ի վերայ Դաւիթ Բէգին: Եւ նա ել ընդ առաջ նոցա ի յՄուշթէփէն, և ետես ի հեռուստ զզօրս թշնամեացն, զի էին բազում յոյժ իբրև վեշտասան հազար, էառ ընդ իւր իբր չորեք հարիւր ընտիր զօրս, և գոչեաց առ Աստուած աղօթիւք յօգնութիւն հասանել, և առ ժամայն յարձակեցաւ ի վերայ զօրու նոցա յաջ և յահեակ կոտորելով:

17. Բայց պատերազմն ոչ շուտով վերջացաւ. այլ տևեաց իբր զաւուրս երկուս, կամ երիս: Եւ ապա յետ երրորդ աւուր, իսպառ եհար, և փախեաց զնոսա, և էառ զամենայն ինչս նոցա զզէն, զսուր, զերիվար և զայլ ամենայն աղխս նոցա:

18. Յետ այսորիկ առաքեաց նա՝ զՄխիթար Սպարապետն իւր ի յաւանն, որ կո-

չի Պուրթլար, և եհար զայն և աւար էառ զամենայն ինչս նոցա։

19. Արդ՝ երբև լուր լինէր ամենայն բնակչացն Խափանու, և Զանգզրու, թէ Դաւիթ Բէգն եկեալ հասեալ է ի Թիկունս Հայոց. մեծաւ քաջութեամբ, առ նա հաւանէին յամենայն կողմանց զօրաւորք։

20. Զառաջինն դիմէր գալ առ նա՝ սակաւ արամբ Թորոսն ի Զանգզուր գաւառէն, և առեալ ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան դառնայր ի տեղի, ընդ իւր առեալ նաև զՊայինդուր զօրավարն Դաւթի ։

21. Յետ այսորիկ, դիմէին գալ առ նա զօրօք իւրեանց, որդիքն Մաղամէլիքին Ջուղայու, որև կոչի Հին-Ջուղայ ի Գողթան գաւառին, և որդիքն Տիլէնչի մականուանելոյն. և սոքա ամենեքեան գային, խառնէին և յաւելանային ընդ զօրսն Դաւթի, երբ երկու հազարս արանց զօրավարաց ։

22. Ընդ այսու ժամանակաւ Մէլիք ոմն էր ի Տաթև՝ ուրացող, որ յառաջն կոչէր Դաւիթ. բայց յետոյ անօրինեալ ի



հաւատս իւր ինքն, և ամենայն տուն իւր, կոչեցաւ անուն Բաղըր, և որդիք նորա ամենեքեան եղեն Շահ—Ղուլի։ Սա երբև զգալն Դաւթի լսէր, զօրսն Տաթևու առ ինքն ժողովէր՝ ամուրս կանգնէր և խորհէր տալ պատերազմ ընդ Դաւիթ Բէգին։

23. Հապա և Դաւիթ բէգն զզօրսն ժողովէր՝ գունդ կազմէր, գայր հասանէր ի վերայ նորա, զամուրսն պաշարէր, և յետ երկուց աւուրց զայն զոռամբ ածէր, և զնա, և զամենայն ինչս նորա կալեալ ի Շենհայր ածէր, և անդ հրամայէր նմա զաւուրս երկոտասան ի մէջ Եկեղեցւոյն յանդիման ամենեցուն ասել բարձր ձայնիւ զառածս զայս ռամկաց թէ „լոյսն Լուսաւորչի հաւատոյն, վայ ուրացող մարդւոյն“. ապա հատանէ զգլուխ նորա. և ինքն երթայ բնակի ի Տաթև ։

24. Ապա հրեշտակս առաքէ ի Հալիձոր առ Տէր Աւետիսն, և առ Մէլիք Փարսատան աներ նորին, և ասէ եկայք միաբանեցարուք ընդ մեզ, զի ի բաց հանցուք զամենայն Թուրքս բնակիչս ի միջոյ. և ոչ կամեցան գալ ։

25. Եւ ի յամին երկրորդի գալստեանն Դաւթի ի Խափան, և ի յաւուրս Բառամնորդաց պահոց ի տօնի սրբոյ Լուսաւորչին, ե՛լ ի վերայ Զամնդուր երկրին Սուլթանն Խափանու, Սուլթանն Բարքուշատայ Բաթալի, և Խանն Սեաւ լերին՝ ութուտասան հազարաւ:

26. Իսկ զօրքն Հայոց, որք դարան մտեալ էին նոցա ի տօնի Ս. Յարութեանն Քրիստոսի, գիշերայն զԱստուած յօգնութիւն ինքեանց կոչեցին, յանկարծակի զաղաղակ բարձին, ի վերայ յարձակեցան, հարին՝ կոտորեցին զբազումս ի նոցանէ, և զայլսն ի փախուստ դարձուցին:

27. Ապա յետ այսորիկ Մելէք Փարսադան, և Տէր Աւետիս եկին յողջոյն Դաւթի: Իսկ նորա բարկացեալ ի վերայ նոցա, ասէ, կոչեցի զձեզ, և ընդէ՞ր ոչ եկիք յօգնութիւն մեզ. և հրամայեաց տանիլ զնոսա ի բերդն Շենհէր, և արկանել զնոսա ի բանտ. և էին նոքա զաւուրս հնգետասան ի բանդի անդ:

28. Եւ դէպ լինէր, յաւուրսն յայնոսիկ Յովհաննէս Պետին Գուգարացւոց՝



գալ ի կողմանս յայնոսիկ յիսուն և վեց հազար Հայադունդ զօրօք, և պաշարէր զանմատչելի բերդն Որոտնայ. և ի չկարելն առնուլ զայն ի Թուրքաց՝ չուէ գայ ի բերդն Շենհէրայ և գտանէ անդ զՏէր Աւետիսն, և զաներ նորա ի կալանս, ազատէ զնոսա, և առաքէ առ Դաւիթ բէգն ի Հալիձոր. և ինքն ի Տաթև երթայ գտանէ զգանձն Դաւիթ բէգին, և առեալ զայն դառնայ ի տեղի իւր:

29. Իսկ Դաւիթ բէգն ընկալեալ զՄելիք Փարսադան՝ կացուցանէ զնա յիւրում կարգի զօրապետութեան ի վերայ երկուհարիւր վաթսուն զօրաց, և զՏէր Աւետիսն ի վերայ չորեքհարիւր քառասնից:

30. Յետ այսորիկ իբրև լսէր Դաւիթ, թէ զօրաժողով լինի Ասլամազ Ղուլին ի կողմանս Բուխուրութայ լերինն ի բերդն Զեվու, վաղվաղակի զզօրսն գումարէր, և գայր բանակէր ի Գարաչիմէն կոչեցեալ գիւղն, և անտի հրեշտակս արձակէր ի Զամնդուր՝ ի Կալեր՝ ի Կենաւուզ, և ի Մեղրի՝ զօրավարացն գալ ժողովիլ անդ. և եկին հասին վաղվաղակի:

31. Բայց Թորոս զօրագլուխն ընդդէմ եկաց նմա ի կռիւ, և միջնորդ մտեալ ի մէջ երկուցն՝ հաշտեցուցին զնոսա: Եւ ժողովեալ զզօրականսն ել գնաց ի վերայ Ասլամազ Գուլոյն. և մատուցեալ պաշարեաց զբերդն Զեւու. և դժուարին եղև առնուլ զայն, զի էր բարձրաբերձ, և անառիկ յոյժ. այլ յետ բաղխելոյն զայն աւուրս երկուս, Մխիթար սպարապետն, և Տէր Աւետիսն, զրոհ տուեալ ի վեր խաղացին: Իսկ նոքա ի պարսպէ անտի զնոսա ի բաց մերժեցին:

32. Բայց Տէր Աւետիսն խափանօք ի յամուր անդր եղանէր, և զգլխաւորն նոցա ձերբակալ առնէր: Յայսմ վայրի զօրքն ամենայն, որք շուրջ էին զբերդաւն, ի պարսպացն ի ներքս զեղանէին, և զսուր ի վերայ եդեալ՝ զամենեսեան զնոսա առ ետեղ սատակէին. և ի նմին աւուր ի յամրոցի անդ կոտորեցին ի Թուրքացն արս չորս հազար, և ի սոցանէ մեռան սակաւ ոմանք:

33. Եւ անտի գան ի յԱջէէջ, և անդ ևս կոտորեն զամենայն Թուրքս բնակիչս ի



նմա: Ապա չուեաց գնաց ի Սիսական գաւառ, և անդ կալեալ կոտորեաց զիշխանս Թուրքաց:

34. Եւ ի յամին երրորդի՝ յետ գալստեան իւրոյ ի Խափան՝ երթայ պաշարէ զմեծ և զանառիկ բերդն Որոտնայ, և ի տօնի Ծաղկազարդին, որ օր չորրորդ էր պաշարման բերդին, եղև անձրև սաստիկ յոյժ (ով սքանչելեացս), և ի սաստկութենէ անձրևին մի կողմն պարսպին ինքնին անկաւ: Սոքա իբրև զայն տեսին, ձայն ետուն, խրախոյս բարձեալ ի վերայ յարձակեցան, և մտեալ ի ներքս հարին կոտորեցին զամենայն այլազգիս, և առին զբերդն:

35. Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքել Դաւթի զբազմութիւն զօրաց իւրոց ի վերայ Թուրքացն Բարքուշատայ. և ինքեան սակաւուք մնալ ի Սիսական գաւառի:

36. Եկն ի վերայ նորա Խանն Նախիջևանայ չորեքտասան հազարաւ: Իբրև զայն լսէր Դաւիթ՝ զօրաժողով լինէր վաղվաղակի ի Դարպասաց, և ի տանէն Սիսական. գունդ

կազմէր, և գայր հասանէր նմա ի վերայ գետոյն Նախիջևանայ. և անդ իբրև ընդ միմեանս բաղխեցան երկոքին ճակատքն, զօրքն Խանին փախստեայ լինէին ի սոցանէ, և սոքա զհետ մտանէին նոցա ի յութուտասներորդ ժամէ աւուրն մինչև ցքսաներորդ ժամն, վանէին, և զբազումս վիրաւոր ի նոցանէ դիաթաւալ կացուցանէին (21)։

37. Բայց ի քսան և երկուերորդ ժամուն, փախստեայքն ամենքեան ի միասին հաւաքեցան և ի կրունկ ընդդէմ Հայոցն դարձան։ Իսկ սոքա իբրև զայն յանդուգն յարձակումն տեսանէին, լքանէին, կասէին և ի փախուստ դառնային ի նոցանէ մինչև ցգետափն. և անդ առ ի ձեպոյն տագնապի էր որ գետակուր լինէր, և էր որ ճարակ սրոյ լինէր. զի պաշարեաց զնոսա սուր թշնամեացն զկնի, և յորդեալ գետն առաջի, և ոչ գոյր այլ ելք ճանապարհի. ուստի յայնմիկ վայրի ծախեցան ի սոցանէ աւելի քան զհազար այր մինչև ցհասանիլ գիշերոյն, և մնացեալ փախուցեալքն թաքեան ոմն ի վէմս, ոմն



ի յայրս, և ի մացառս։ Իսկ ի յերկրորդ պահու գիշերոյն եկն եհաս Դաւիթ ի Սիսական. և փախստեայքն ամենքեան եկին ժողովեցան առ նա։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Թէ զիա՞րդ եկն այար Թորոս զօրավարն։ Եւ թէ որպիսի պատերազմաւն ելին ի կողմանս Զանգեզուրոյ և Մեղրւոյ։

1. Ընդ աւուրս ժամանակացն այնոցիկ իբրև լսէր Թորոս ի Խորձոր, որ է ի Զանգեզուր գաւառին, թէ Դաւիթ Բէգն եկեալ հասեալ է բազում զօրօք ի Սիսական գաւառ, ընդ իւր առնոյր արս իբր երեսուն, և գայր առ նա ժամանէր, և առեալ ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան, վաղվաղակի դարձ առնէր, գնայր ի Զավընդուր, և զարս տեղւոյն առ ինքն ժողովէր, կարգէր կազմէր զնոսա գունդս գունդս, և ի վերայ նոցա կացուցանէր հարիւրապետս, և յիսնապետս։

2. Դէպ եղև յաւուրս յայնոսիկ հօտ մի խաշանց Սուլթանին, յորումէին երկու հազար ոչխար, և երկոտասան հովիւք, գալ արածել յերկրին Զամնդրու: Իսկ Թորոս իբրև զայն լսէր, զարս առաքէր, երթալ կոտորել զհովիւսն, և զամենայն զհօտն ածել առ ինքն. և արարին այնպէս:

3. Եւ այս ամենայն եհաս յականջս Բաւթալի Սուլթանին Բարքուշատայ, և եղբօր նորին Եղասի Խանին, և գրեաց վաղվաղակի առ Մահնիչար օղլի Սափի Գուլին, օրինակ զայս:

4. "Եղդ եղև մեզ, և մեք մեղէն գի-"տացաք, թէ զիա՞րդ Հայքն Զամնդրոյ "ապստամբեալ են ի մէնջ, և սուր վերա-"ցուցեալ ընդդէմ Թուրքաց. ուստի յայս "ինչ աւուր երկոտասան հազարաւ ելա-"նեմ ես ի վերայ բնակչացն Զամնդրու: "Դու ևս առցես ընդ Քեզ զամենայն "զօրս Թուրքաց, որք են ի Կենաւուզն, "և դու այդի, և ես աստի, եկցուք ի վե-"րայ նոցա և ջնջեսցուք ի միջոյ:" Եւ նա ոչ էառ յանձն առնել զայն:

(1001) 1983



5. Եւ ել Բաւթալի Սուլթանն ի վերայ Զամնդրու երկոտասան հազարաւ: Իսկ բնակիչքն իբրև զայն լսէին, հարիւր յիսուն վառեալ ի Ցիզկիտոյ առաքէին, երթալ, կալնուլ զանցս ճանապարհին, զի էր անտառախիտ յոյժ. և եկին դարան մտին նոցա անդ:

6. Արդ զօրքն Թուրքաց իբրև անդր ժամանէին՝ դարանամուտքն ստէպ ստէպ զհրացանս ի վերայ նոցա արձակէին, և այլ վառեալքն Հայոց ի ճակատ անդր ժամանէին, և զբազումս ի նոցանէ առ եսեղ սատակէին, և զայլսն փախստականս առնէին առաջի իւրեանց մինչև ցկողմանս Բարքուշատայ: Եւ յաւուր յայնմիկ անկանէին ի թշնամեացն արք իբրև չորք հազար:

7. Բայց ի հետևեալ աւուրն Սափի Գուլին Լևազեան երեք հարիւր սպառազէն արամբ՝ նենգութեամբ գայ, բանակի ի Զաւինիս. և գրեաց անտի իշխանացն Գաց աւանին, զի և նոքա եկեսցեն, որպէս զի զՄանլև, և զամենայն զիւզօրէսն Հայոց, որք էին ի կողմանս յայնոսիկ, ա-

ւար առեալ աւերեսցեն. բայց Միրզա Սալիլ իշխանն ոչ կամեցաւ զայն ։

8. Եւ զայս ամենայն իմացեալ արքն Մանկլեու՝ առաքեցին արս ի Զամնդուր առ Թորոս և ասեն, եւ Սափի Գուլէն, և զայս ինչ, և զայն ինչ խորհի առնել ։ Իբրև զայն լսէր Թորոս զօրապետն, նոյն ժամայն վառէր պատրաստէր, և գիշերայն հինգ հարիւր վառելովք դիմէր գալ ի վերայ նորա. և ի յառաւօտուն յերեքտասաներորդ ժամուն ի Զափնիս հասանէր. իսկ Սափի Գուլէն իբր զայն տեսանէր, փախստեայ լինէր, և Թորոսն զհետ մտանէր և հարկանէր ի նոցանէ արս ութսուն ։

9. Եւ ի ժամանակին յայնմիկ հարին կոտորեցին զերիս գիւղս Թուրքաց, և առին զամենայն ինչս նոցա, և դարձան ի Մանկլէ ։

10. Արդ իբրև լուր լինէր բանս այս ի Բթլիս, և ի Գաց, ամենայն արք բնակչացն ի միասին գային՝ ժողովէին, և զամենայն զկին, և զորդիս խուժանց հանէին ամրացուցանէին ի բարձրագոյն գագաթն, որ հանդէպ աւանի նոցա էր, և ինքեանք վառեալք, և յարձակեալք գային ի վերայ Մանկլեու ։



11. Իսկ Թորոսն ի գլխոյ Մանկլեուն ընդ առաջ լինէր նոցա, և ի դիմի հարեալ զբազումս ի նոցանէ անդանօր սատակէր, և զայլսն մինչև ցԲթլիս ի փախուստ տանէր, և ինքն հրաման տայր զօրացն մի ևս պնդել զկնի նոցա, այլ երթալ, հարկանել, և այրել զտունս նոցա, առնուլ զամենայն ինչս նոցա, և դառնալ. և իբրև կատարեցին զայն ամենայն, դարձան ի Մանկլէ ։

12. Եւ եկաց Թորոս ի Մանկլէ զաւուրս երիս, և կացոյց անդ զՊապ Կալէրցի, զորդին Սրապիոնի զօրապետ և կառավար ի վերայ երկրին Կենաւուղոյ, և ինքն դարձ արար գնալ ի Զամնդուր ։ Իսկ Պապ զօրաժողով լեալ՝ գայ բնակի ի Կալէր աւանին ։

13. Բայց Սափի Գուլէն զգիւղօրէսն Թուրքաց, որք էին ի Նևազու ձորն, խաղացուցանէ ի յՕրդուվար. և մնացին միայն չորք գիւղք Թուրքաց ի կողմանս Երձանաքարին ։

14. Եւ հրամայեաց Պապ երթալ կոտորել զնոսա. և եկին հարին զերիս գիւղ-

րըն, և ի յաւար առին զինչս նոցա։ Եւ ի Թաղամեր աւանին էր վաթսուն տուն Թուրքաց, սոքա եկին, լացին, զաղաղակ բարձին առ զօրականսն Հայոց, և ասեն մեք ըստ ամենայնի ամենայն կերպիւ հպատակեմք Ձեզ, և խնայեցին ի նոսա։

15. Յետ այսորիկ, իբրև մի ամիս կամ երկու ի վերայ անցանէր, Սաֆի Ղուլին առնոյր ընդ իւր ի յՕրդուվարայ արս հինգ հարիւր, և ի գիշերի միում գայր հարկանէր զերկու գիւղս Հայոց ի Սայպուն, զարսն կոտորէր, և զկին և զորդիս նոցա գերի վարէր ի յՕրդուվար։

16. Իսկ Դաւիթ բէգն իբրև լսէր, ըզՄխիթար սպարապետն իւր յառաջ կոչէր, հրաման տայր նմա երթալ սատակել զնոյն վերոյ ասացեալ վաթսուն տունս ի Թաղամեր, և նա արար այնպէս։ Եւ զայսու ժամանակաւ Դաւիթ բէգն կատարէր զշինուածս բերդին, որ ի Հալիձոր։

17. Հրաման տայր նաև Պապայ զօրապետին երթալ ի Նաւազու ձորն, և եթէ գտանիցէ անդէն մնացեալ չէն ինչ Թուրքաց, կոտորեսցէ, զի սակաւ ոմանք մնա-



ցեալք էին. և նոքա ևս փախուցեալ անկան ի յՕրդուվար։

18. Այլ Պապայ յուղեալ գտանէ անդէն զբազում ինչս, և զայն ամենայն ի Զաւար աւանն առաքէ, և անդ պահապանս կացուցանէ, և ինքն չուէ գնայ ի կողմանս Վահրավարայ, և անդ զերիս տունս գտանէ, որք ուրացեալք էին զՔրիստոս, զնոսա զամենեսեան կոտորէ, և առեալ զամենայն ինչս նոցա, և հանեալ ըզգանձ բազում ի կողմանցն յայնցանէ, ի տեղի իւր դառնայ։

19. Եւ այսպէս զօրականքն Դաւիթ բէգի ընդ ամենայն երկիրն Կափանու շրջէին, յոյզ և խնդիր առնէին, և ուր ուրեք ըզԹուրք գտանէին՝ սուր ի վերայ եդեալ սատակէին, մինչև բնաւին բնաջինջ առնել զամենայն Թուրքս ի Կափանու։

20. Ընդ աւուրս ընդ այնոսիկ, իբրև ազդ լինէր Դաւթի, թէ զօրաժողով լինի Ասլամազ Ղուլին ի կողմանս Բուխուրութայլերին, վաղվաղակի զօրաժողով լինէր, ի վերայ հասանէր, և զնոսա զամենեսեան սատակէր անդ։

21. Բայց որպէս ի վեր ասացաք, իբրև գայր ի Գարաչիմէն, ընդդէմ ելանէր նմա Թորոս զօրագլուխն մարտիւ պատերազմի, և միջնորդ մտեալ ի մէջ երկուցն հաշտեցուցին զնոսա: Եւ մեկնեցան գնացին յիւրերաց Դաւիթ բէգն ի Հալիճոր, Թորոսն ի Զանգզուր և Պայն ի Կենաւուզ:

22. Յամին երորդի, յետ գալստեան Դաւթի ի Ղափան, Թորոս զօրագլուխն հանդէս արար ամենայն զօրաց ի Զանգզուր, և ժողովեաց զամենայն այր զօրաւոր ի յերկրէ իւրմէ, առ ի գնալ ի վերայ յՕրդուվար քաղաքին:

23. Բայց մելիք Ֆռանկիւլն Երից վանիկ աւանին, որև ասի Կարմիր Վանք ի կողմանս Բարքուշատայ, գրեաց առ Թորոսն այսպէս:

24. "Ազդ եղև Բաթալի Սուլթանին, "վասն քո, թէ զօրաժողով ես դու առ ի "գալ ի վերայ յՕրդուվարայ, սա ես ա- "հաւասիկ զօրաժողով է աստ, որպէս զի, "ընդ ելանելն քո յերկրէդ, ի վերայ հա- "սեալ սատակեսցէ զերկիրն քո: Ուստի "յոյժ բարւոք արասցես, եթէ նախ եկես-



"ցես ի վերայ Բարքուշատայ: Նա զի և "ի մեզ եղեալ Հայքս Բարքուշատայ՝ քեզ "թիկունս առնեմք:"

25. Այլ զայս ամենայն անօրէն մտօք, նենգաւոր խորհրդով գրէր, զոր գրէրն, զի ի ծողակս թշնամւոյն զնա անկանիցէր, առ ի հաւատարիմ ցուցանել զինքն Սուլթանին, զի մի՛ ի բաց լինիցէր ի տէրութենէն (իբր թէ զհետ մտեալ իցէ նա Դաւթի, և զօրականաց նորա). Եւ ոչինչ փոյթ եղև նմա լինելն անհաւատարիմ, նենգաւոր, թշնամի Աստուծոյ իւրոյ, և ժողովրդեանն մատնիչ և սատակիչ, որպէս ի հետագայս ցուցցին առնս այսորիկ թշնամութիւն, և չարիքն:

26. Եւ հաւատայ Թորոս բանից նորա, և ել գնաց միամտութեամբ և եհաս ի յԵղեվարդ, որ է ի սահմանս Բարքուշատայ ինքն և ամենայն զօրք իւր, և բանակեցաւ անդ: Եւ եկն առ նա Ֆրանկիւլն երկու հազարաւ, և եկաց ի մի կողմն Թորոսին:

27. Եհաս անդր և Բաթալի Սուլթանն, և եղբայր նորին Աղասի Խանն բազում զօրօք, քան որչափ էր ընդ Թորո-

սին, ՚կրկնապատիկ և եռապատիկ, և առաւել ևս իբրու ութուտասան հազարաւ. և իբրև ճակատեցան ընդդէմ իրերաց զօրքըն Սուլթանին, և զօրքն Թորոսին, զօրքն Սուլթանին փախստեայ լինէին, և սոքա զհետ լինէին նոցա :

28. Եւ մինչդեռ վանեալս առաջի տանէին զնոսա, անօրէն Ղուանկիւլն զարս արձակէր զկնի Սուլթանին, և ասէ, զի՞նչ գործէք, զիա՞րդ փախչիք, դարձարուք ի կռունկս, զի ահա ես ընդ ձեզ եմ, դուք ի յառաջոյ, և ես զկնի սոցա, խորտակեսցուք զսոսա: Եւ արարին այնպէս. և պաշարեցին զզօրսն Թորոսին ի յառաջոյ, և զկնի, և սկսան կոտորել, և զԹորոս սպանին, և միայն հազար չորեքհարիւր արք զերծեալ ի նոցանէ անկան ի Զամնդուր, և մնացեալքն ամենքեան անկան անդ:

29. Ահա զայսպիսի մեծ անօրէնութիւն գործեաց Ղուանկիւլն, և ոչ այսչափ միայն, այլ և առաւել հաճոյանալոյ վասն Սուլթանին, և ցուցանելոյ հաւատարիմ զինքն, ուրացաւ նաև զհաւատն :



30. Արդ՝ այս ամենայն իբրև այսպէս անցանէր, Բաթալի Սուլթանն խորհուրդ ի մտի դնէր՝ գալ մտանել ի Զամնդուր առ ի կոտորել և կործանել զբնակիչս նորա: Բայց Նուբար զօրապետն կալաւ զտեղի Թորոսին:

31. Եւ իբրև զայն զգայր, վաղվաղակի հրովարտակս առաքէր առ Պապ զօրապետն, և ասէր, "Դու ինքնին գիտես, զի "ահա կորեան զօրքն մեր, և արդ յարու-"ցեալ գայ ի վերայ մեր Բաթալի Սուլ-"թանն, յօգնութիւն հասէք մեզ :" Եւ նա վաղվաղակի առաքեաց ի Զամնդուր զերկու հազար զօրս ի յօգնութիւն Նուբարին: Իսկ Բաթալի Սուլթանն իբրև գիտաց, թէ յօգնութիւն հասին Նուբարին ի Կենաւուզայ, դարձաւ ի տեղի իւր:

32. Եւ ի զօրավարացն Պապայ, որք եկին ի Զամնդուր, երկու զօրավարք ապստամբեցան ի Պապայ վասն խռովութեան ինչ եղելոյ ի մէջ: Եւ եկեալ ի Լեզկին աւանն զօրաժողով եղեն, և կամեցան ունել զՊապ, և ասեն մեք կառավարեսցուք զերկիրն: Իսկ նա փախեաւ ի նոցանէ:

33. Իբրեւ զայն լսէ Դաւիթ բէգ, զԳորգի զօրապետն երկերիւր արամբ առ նոսա առաքէ. որոյ եկեալ զնոսա հաշտեցուցանէ, եւ Պապայ հնազանդ առնէ. եւ զվերոյիշեալ աւարն, զոր առին ի Լեւազու, ի մէջ նոցա բաժանէ:

34. Յետ այսորիկ իբրեւ մի, կամ երկու ամիս ի վերայ անցանէր, ի յՕրդուվարայ առ Պապ գուժկան հասանէր, թէ զօրաժողով լինի Թուրքն առ ի գալ, եւ աւերել զԽափան: Յայնժամ իշխանքն Կենաւուզայ ի միասին գային, խորհուրդ խորհէին, հրաման տալ ժողովել զբովանդակ մարդիկն գիւղօրէիցն, յերկուս գիւղս, ի Վանք կոչեցեալ շինէն մինչեւ ցԿալեր, եւ ի Կալերու մինչեւ ցՄանլեւ, եւ մինչեւ ցՆքիս. եւ հաստատեցաւ բանս այս ի խորհրդեան, եւ արարին այնպէս:

35. Նա յետ քանի աւուրց Սաֆի Դուլին՝ Դազու որդին յՕրդուվարեցի, եւ որդին Շահիպամին ութն հազարաւ գային, անցանէին ի յՆլանկէզայ լերանց ի Պուղաքարն: Նա իբրեւ այնպէս զանցանելն նոցա լսէր Պապ, առեալ ընդ իւր երկուս



հազարս ընդ առաջ ելանէր նոցա: Բայց իբրեւ զայնքան բազմութիւն թշնամեացն տեսանէր, ի նոցանէ թիկունս դարձուցանէր: Ապա այնուհետեւ զօրք թշնամեացն համարձակ յառաջ խաղային, գային մինչեւ ցԴաշտուն աւանն հասանէին, եւ զբոլոր գիւղօրէսն քանդէին եւ աւերէին: Իսկ ժողովուրդ գիւղօրէիցն, որք ի միասին հաւաքեալք էին, (որպէս ի վեր ասացաք,) ամենեքեան անցին ի Խաչպօղու լերանցն ի յերկիրն Զանգուր:

36. Զայս ամենայն իբրեւ Դաւիթ լսէր, ի սրտմտութիւն բարկութեան բրդէր, եւ առեալ ընդ իւր երկու հազար ութն հարիւր սպառազէն՝ փաղփաղակի խաղայր գայր ի Դաշտուն: Իսկ Թուրքն իբրեւ զգալն Դաւթի զգային, փախստեայ գնային ի յՕրդուվար: Նա եմուտ Դաւիթ ի Դաշտուն, եւ սկսաւ բարկանալ յոյժ ի վերայ Պապայ. եւ ասէ մի թէ չիցէ՞ բաւական զի փախեաւ ի պատերազմէն, եւ արդ ոչ եւս կամի գալ առ իս:

37. Նա եւ գնաց անտի ի Կալեր, եւ կալեալ անդ զՊապ ածէր ընդ ինքեան, եւ

անցեալ ի լերանցն Խաչպօլու իբրև մօտե-
ցան ի Յեշկիտ՝ գլխատեաց զԳայ, և ա-
ւար էառ զինչս նորա, մանաւանդ զի այլք
չարախօսէին զնմանէ: Ապա յետ երից ա-
ւուրց չուեաց գնաց ի Յիշկետու ի դաշ-
տավայրն Կեմանցու:

38. Արդ՝ իբրև լուր եղև ի յՕրդու-
վար, թէ Գաւիթ անցեալ է ի Զափնդուր,
ելին կազմեցան պատրաստեցան Սափի
Գուլին, որդին Գազու, և որդին Շա-
հիլամին, և առեալ ընդ իւրեանս զօր
բազում իբր երկոտասան հազարաւ գային
հասանէին ի կողմանս Կենաւուզայ, և ան-
ցեալք ի լերանցն Ալանկեզայ, զամենայն
գիւղօրէսն Կենաւուզայ այրեցին:

39. Ապա գուժկան հասանէր առ Դա-
ւիթ՝ վասն այսր ամենայնի: Եւ նա վաղ-
վաղակի առնու ընդ իւր արս իբր չորս հա-
զարս, և գայ բանակի ի Կալեր. և ի յա-
ռաւօտուն պահու ի վերայ հինիցն Թուր-
քաց հասանի, և գտանէ զնոսա բանակեալս
յայնկոյս Մեղրւոյ գետոյն: Իսկ նոքա ան-
տի իբրև տեսին զզօրսն Գաւթի, առհա-
սարակ հային կալան զգետափն, և ոչ տա-



յին թոյլ անցանել Գաւթի զգետն. ապա
սոքա աստի, և նոքա անտի մարտ եդեալ
կռուէին յառաւօտէ մինչև ցերեկոյ: Եւ
իբրև եհաս զիշերն, խոյս ետ Գաւիթ, և
չուեաց գնաց անտի ի Ղալիձոր:

40. Արդ ի վաղիւ անդր զօրքն Թուր-
քաց իբրև գիտացին, թէ Գաւիթ մեկնե-
ցաւ գնաց ի նոցանէ, և ոչ ուստեք էր
նոցա այնուհետև երկիւղ, համարձակ ան-
ցին գնացին ի կողմանս Գուրհամայ. և
սկսան կոտորել, և ասպատակ հարկանել
զգիւղօրէսն մինչև գալ նոցա, և պաշա-
րել զՄեղրի:

41. Արդ՝ իբրև զայն լսէին, որք շուրջ
էին ամենայն բնակիչք Թուրքաց, գային
ժողովէին ի կողմանցն Թավրիզու, և Սեաւ
լերինն, յաւելանային ի նոսա, և լինէին
ութուտասան հազար. ապա մատուցեալ
պաշարէին զամուր աւանն Մեղրի:

42. Իսկ բնակիչք Մեղրւոյ, ժողովե-
ցան յերիս թաղս ամենայն արք պատե-
րազմողք առ ի մարտնչել ընդ նոսա: Եւ
ի յաւուրն հինգերորդի, յետ պաշարման
նոցա, ամենայն բազմութիւն զօրացն այլ-

ազդեաց զրոհ տուեալ մտին՝ կալան զփոքրիկ Թաղն: Եւ որք ի ներքս էին զօրականքն Հայոց, փաղփաղակի մատուցեալ ի բաց առին զկամուրջս գետոյն, և կալան զանցս նոցա, զինուք և հրացանօք, զի մի՛ կարասցեն նոքա այլ յառաջ խաղալ, և միայն զօրք Թշնամեաց ի փոքրիկ Թաղըն:

43. Յայնմ վայրի հրեշտակս արձակեցին Մեղրեցիքն ի գաւառն Գուրհամայ ի Կալէր, և ասեն ահա՛ զօրք Թուրքաց հասին՝ կալան զփոքրիկ Թաղն մեր: Եւ արդ՝ մեզ եթէ յօգնութիւն ոչ հասանիցէք մինչև ցերկու աւուրս, բազմութեան նոցա՝ մեք զդէմ ունիլ ոչ կարեմք: Եւ իբրև եհաս առ նոսա հրեշտակն, եւ փաղփաղակի զիշերայն Ստեփաննոս Վարդանիսեան որ ի տանէն Շահումեան, և ի յաւանէն Եկղասեան, (որև էր նա ինքն փոխանորդ, և տեղակալն Պապայ զօրապետին) գնաց ի գաւառն Զանգզուր, առ զօրապետն Պայինտուր, և ծանոյց նմա զամենայն անձկութիւնս Մեղրեցւոցն, և զվիշտս վտանգի նոցա:



44. Արդ նա իբրև զայն լսէր, զարս արձակէր ի Զանգզուր առ զօրականսն՝ փաղփաղակի գալ ժողովել անդ. և եկին հասին առ նա, և խմբեցան անդ երկու հազարք արանց քաջ սպառազինաց ի Զանգզրու և ի Գուրհամայ, և եւ նոքօք Պայինդուր զօրապետն, և գնաց բանակեցաւ զայն գիշեր ի Մազրան աւանն, և Ստեփաննոս ընդ նմա. և մերձ յառաւօտուն պահու ելին՝ կազմեցան, և անցին գնացին ի կողմանցն Եփկլիսու, և եկին մտին ի Մեղրի:

45. Իսկ զօրքն Թուրքաց ի բանակէ անտի՝ իբրև զբազմութիւն զօրացն Հայոց տեսանէին, ոչ հաւատային, թէ յօգնութիւն իցեն նոցա հասեալք այլուստ, այլ ասէին, թէ Մեղրեցիքն կանանց իւրեանց զգեցուցեալք են զզեստ առնացի, և զզարդ պատերազմի, և տուեալ զբազում սուտ դրօշակս ի ձեռս նոցա առ ի երկեցուցանել զմեզ:

46. Այլ մինչչև էին հասեալ սոքա ի Մեղրի, քաջ և արի զօրքն Մեղրեցւոց գործ քաջութեան ի նմին գիշերի գործե-

ցին․ զի անցեալք յայնկոյս գետոյն, յեղա-
կարծումն ժամանակի ի մէջ բանակի Թըշ-
նամեաց յարձակէին, և զբազումս ի նո-
ցանէ ի սուր սուսերի սատակէին, մինչև
և զօրդին Շահխալամին երկու հազարաւ
ի յՕրդուվար քաղաք ի փախուստ արկա-
նէին։ Այլ զի սակաւք էին, ոչ կարացին
իսպառ ջնջել, և անհետս առնել զնոսա
անտի, դարձան անդրէն ի Մեղրի ։

47․ Իսկ օգնականքն Հայոց իբրև գա-
յին և ի Մեղրւոյ մեծ Թաղն ժամանէին,
Մեղրեցիքն վաղվաղակի նոցա զկերակուր
պատրաստէին ։ Յայնժամ Պայինտուրն,
որ էր իշխան և զօրագլուխ ամենայն զօ-
րուն եկելոյ ընդ նմա, արգելու զնոսա, և
ասէ․ քաւ լիցի մեզ ուտել ինչ, մինչ չև
իցեմք ողորմութեամբն Աստուծոյ վան-
եալք զթշնամիս մեր։

X 48․ Զի խորհուրդ, և ջան էր նորա ըզ-
գործ պատերազմին փութով վճարել․ վասն
զի աւուրբ միով յառաջ քան զայն այլ-
ազգիքն գրեալք էին առ զօրականս Թուր-
քաց, որք յայնկոյս գետոյն Երասխայ, գալ
յօգնութիւն հասանիլ նոցա, և նոքա



պատրաստք էին բազում գնդաւ գալ ի
թիկունս հասանիլ նոցա։ Ուստի վաղվա-
ղակի Պայինտուրն հանդէս առնէր ամե-
նայն զօրուն եկելոյ ընդ նմա և որք ի յամ-
րոցի անդ էին, և կարգէր՝ կազմէր, և զնոսա
յերիս գունդս բաժանէր, առ իւրաքան-
չիւր գունդ ութն հարիւր վաթսուն սպա-
ռազէն վառեալք ։

49․ Ապա զմի գունդն ընդ առաջ հա-
նէր ճակատու թշնամեաց մարտիւ պա-
տերազմի, և այլ երկու գունդքն առ հա-
սարակ ձայն տուեալ խրախոյս բարձին՝ ի
վերայ յարձակեցան յաջմէ և յահեկէ զօ-
րացն Թուրքաց, և ի վեշտասաներորդ ժա-
մէ աւուրն մինչև ցքսան և երեքերորդ
ժամն պատեցին, ի մէջ առին զբազմու-
թիւն զօրացն անօրինաց, և կոտորեցին ի
նոցանէ ի նմին աւուր աւելի քան զմետա-
սան հազար այր, և զայլսն ի փախուստ
արկին ի յՕրդուվար, և զհաջի Շափին
(որ էր այր երևելի ի մէջ ամենեցուն,) ձեր-
բակալ արարին ։

50․ Եւ առին ի նոցանէ զամենայն զկահ,
և զկարասիս, զզէն, զուր և զամենայն գոր-

ծխս պատերազմին, և զամենայն զառ և զաւար նոցա: Եւ եղև ուրախութիւն մեծ ամենայն բնակչացն Խափանու: Եւ ի նմին պատերազմի անկան ի նոցանէ Մուրում Քալանթարն Լևազեցի, և որդի հօրեղբօր նորին, և այլք բազումք: Իսկ գ՟աջի Շափին, զոր ըմբռնեցին, կամեցաւ Դայինտուր զօրագլուխն ածել զնա առ Դաւիթ բէգն: Բայց իշխանքն Մեղրւոյ աղաչեցին զնա, թողուլ գ՟աջին անդ առ նոսա. և նա շնորհեաց նոցա: Եւ եդին զնա ի կալանս ի տան տեառն Ներսխի: Իսկ զօրականքն ամենեքեան գնացին իւրաքանչիւրքն ի տունս իւրեանց:

51. Այլ գիւղականքն Գուրհամայ, որք վասն ահի հինիցն անցեալք էին յերկիրն Չաւնդրու, որպէս ի վեր ասացաք, դարձան գնացին, և բնակեցան իւրաքանչիւրքն ի տեղիս իւրեանց:

52. Յետ այսորիկ, իբրև մի ամ ի վերայ անցանէր, եղբայրն Խանին Երևանայ զբազում զօրս կուտէր, և երթայր յօգնութիւն եղբօրն իւրոյ, զի էր պաշարեցեալ նա ի յամուրս Երևան քաղաքի ի զօրացն



Օսմանցւոց: Արդ՝ սա իբրև բազում զօրօք ի յՕրդուվար քաղաք հասանէր, ամենայն Մահմետականք քաղաքին նմա ընդ առաջ լինէին, և գ՟այոցն Մեղրւոյ բողոք բարձեալ ասէին, դատ արա ընդ Մեղրեցիսն, զի նոքա կոտորեցին, կորուսին զամենայն արս քաղաքիս: Եւ նա առաքեաց զոմանս ի ծառայիցն ի Մեղրի, երթալ կոչել առ ինքն զոմանս ի գլխաւորաց իշխանացն, առ ի գիտել զպատճառն այնպիսւոյ աղմկին:

53. Իսկ իշխանքն Մեղրւոյ իբրև զայն լսէին, տագնապէին, փարանէին ի միտս իւրեանց, ի միասին ժողովէին խորհուրդ խորհէին, և ասէին զի՞նչ արասցուք, զի եթէ երթայցեմք մեծ վտանգ է մեզ. և եթէ ոչ երթայցեմք, նոյնպէս մեծ վիշտ վտանգի է մեզ, և ամենայն ժողովրդեանս: Վերջապէս հաւանեցան ոմանք ի նոցանէ, վասն օգտի հասարակութեանն զվտանգ մահուն յանձն առնուլ, երթալ ընդ սպասաւորսն Խանին:

54. Եւ իբրև ելին գնացին ընդ նոսա, և հասին ի յՕրդուվար քաղաք, քաղա-

քացիքն առ հասարակ դիմեցին ի վերայ նոցա ի սպանանել զնոսա։ Բայց ծառայքն Խանին ոչ ետուն նոցա թոյլ, մինչև ածին կացուցին զնոսա առաջի Խանին, և քաղաքացիքն զհետ երթային նոցա. և իբրև յանդիման եղեն Խանին, սկսան վերստին քաղաքացիքն զաղաղակ բառնալ, և ասել դատ արա ընդ մեզ և ընդ Մեղրեցիսդ, զի կորուսին սպառեցին զմեզ։

55. Եւ ի հարցանելն Խանի զՄեղրեցիսն, պատասխանի առնէին նմա, թէ մեք ոչ ումեք դոցա մեղաք, և ոչ զոք ի դոցանէ ի տարապարտուց սպանաք. այլ դոքա զբազում զօրս կուտեցին, և եկին ի վերայ մեր, զբազում գիւղօրէս մեր կոտորեցին կործանեցին, և ի գերի վարեցին, ապա ի զուր տարապարտուց եկին և զմեզ պաշարեցին, և կամեցան բնաւին բնաջինջ առնել։ Եւ մեք առ ի պաշտպանել զմեզ ընդդէմ ելաք դոցա, և ի բաց վանեցաք։

56. Յայնժամ ասէ Խանն ցՕրդուվարեցիսն, ով հրամայեաց ձեզ ելանել ի վերայ նոցա առ ի կողոպտել, և կորուսանել զնոսա. և նոքա ափ ի բերան եղեն, և



ոչ կարացին առ այն տալ պատասխանի։ Ապա ասէ ցնոսա Խանն, ով եղև ձեզ առիթ, և առաջնորդ ելանել ի վերայ նոցա. և նոքա ասեն Սաֆի Ղուլին Լևազեցի, և որդին Մանիչարի, և որդին Ղազու Օրդուվարեցի, և որդին Շահխալամին։

57. Եւ կալեալ Խանին զՍաֆի Ղուլին խրատեաց զնա խստագոյն գանիւք, և էառ ի նմանէ զտուգանս։ Եւ զՄեղրեցիսն արձակեաց խաղաղութեամբ ի տեղիս իւրեանց. և ինքն չուեաց գնաց անտի։

58. Ապա այնուհետև սկսան Օրդուվարեցիքն, առնել զհաշտութիւն ընդ Մեղրեցիսն. և խնդրեցին արձակել նոցա զհաջի Շափին, և նոքա ևս խնդրեցին ի նոցանէ արձակել զգերիսն Հայոց, զորս գերեցին ի գիւղօրէիցն. և յանձն առին արձակել զնոսա. յայնժամ Մեղրեցիքն գրեցին առ զօրագլուխն Ագուլեցւոց, զի ընկալցին ի յՕրդուվարեցւոցն զեօթանասուն անձինս Հայոց զգերեցեալսն ի նոցանէ, և ազդ արասցեն ինքեանց, թէ ընկալան զնոսա, որպէս զի և ինքեանք արձակեսցեն զհաջի Շափին։ Եւ արարին

այնպէս, և սոքա արձակեցին զՇափին. և այնուհետև եղև խաղաղութիւն ի մէջ նոցա:

59. Արդ՝ այս ամենայն իբրև այսպէս անցանէր, ապա Դաւիթ բէգն զզօրականն իւր ի լեառն Ղազանկուլու ի վերայ Թուրքմանացն առաքէր. որոց հասեալ անդ գիշերայն անկան ի վերայ ամենայն բնակչաց լերին, և հարին կոտորեցին զնոսա, և առին զամենայն ստացուածս նոցա. և մինչդեռ զհետ մտանէին սոքա փախըստէիցն, պատահեցաւ Մխիթար սպարապետն միայնակ առաջի Թշնամեացն. առ որ քարաձիգ լեալ կալան զնա: Իսկ նա աղաղակեաց, և ասէ, հասէ՛ք ինձ, զի մատնեցայ ի ձեռս Թուրքաց: Եւ առ ժամայն աճապարեալ Տէր Եւստախն Թափեաց զնա ի ձեռաց նոցա: Եւ առեալ զամենայն զառ և զաւար նոցա դարձան, և ածին ի Հալիձոր առ Դաւիթ զվեց հազար երեք հարիւր ոչխարս, և զչորս հարիւր երեսուն զայլ անասունս նոցա. որոյ տեսեալ զայն ամենայն՝ ուրախ լինէր:

60. Եւ յետ սակաւ աւուր դարձեալ առաքէր զնոսա ի լեառն Կազպէլու ի վերայ



Թուրքմանացն. և գնացին հասին անդ, և հարին զնոսա և առին զինչս նոցա, և զանասունս ինն հարիւր, և դարձան:

61. Դարձեալ ընդ աւուրսն ընդ այնոսիկ, ցեղ ինչ Թուրքացն Բարքուշատայ գային, ի լեռնակողմանս Խափանու վրանօք բնակէին, որպէս և այլ ժամանակս ամարայնոյ առնէին, վասն խստութեան օդոյ երկրի իւրեանց: Արդ՝ իբրև զայն լսէր Դաւիթ բէգն, փաղփաղակի զՄխիթար սպարապետն իւր հազար ութն հարիւր վառելովք ի վերայ նոցա առաքէր. և նորա երթեալ յուզէր, և հետամուտ լեալ գտանէր զնոսա ի վերին կողմանս Կարմիր Վանք կոչեցեալ աւանին: Եւ ի վերայ հասանէր նոցա յառաւօտուն պահու, և առեալ զամենայն ինչս նոցա, և զանասունս, դառնայր:

62. Բայց Խանն Բարքուշատայ աճապարեալ ընդ առաջ եկանէ սոցա, ի կողմանս Խոտանանու բազում զօրօք: Իսկ զօրականքն Հայոց իբրև զայն տեսին, սաստկացուցին ի վերայ նոցա զպատերազմն մինչև յետս նահանջեցին զնոսա անտի,

և սկսան հարկանել զվիրաւորս ի նոցանէ ։

63. Եւ զի Մխիթար սպարապետն խռովեալ էր ընդ տեառն իւրոյ Դաւթի, ուստի իբրև սկսան սոքա հարկանել զթըշնամիսն, և վանել, հրամայեաց Մխիթար զօրավարացն յետս գալ ի պատերազմէն, և արարին այնպէս. բայց յառաջամարտիկքն իբրև տեսին, թէ զկնի եղեալ զօրքն դարձան յետս, համարեցան, թէ ի փախուստ դարձան ի պատերազմէն, և սկսան իւրաքանչիւրքն խոյս տալ ելանել ի պատերազմէն։ Յայնժամ զօրքն թշնամեաց իբրև զայն աղմուկ շփոթի տեսանէին, ընդդէմ դառնային սոցա, ի վերայ յարձակէին, հասանէին, և հարկանէին ի սոցանէ երեք կամ չորեք հարիւր այր, և զոմանս ի նոցանէ կենդանի կալեալ մեծաւ տանջանօք ի Բարքուշատ ածին, ընդ որս էր և Ստեփաննոս Շահումեան։

64. Եւ զայն լսէր Դաւիթ, ի սրտմըտութիւն բարկութեան բրդէր ի վերայ Մխիթարայ, և հրամայէր զկառափն հարկանել։ Բայց միջնորդ լեալ մեծամեծացն



հազիւ դարձուցին զվճիռ մահուն ։ Եւ սուգ էառ Դաւիթ ի վերայ քաջին Ստեփաննոսի, և այնքան զօրացն ի զուր տարապարտուց կորուսելոյ։ Իսկ Ստեփաննոս իբրև ածեալ եղև ի Բարքուշատ, հանդիպեցաւ անդ ի տան Խանին բարեսէր ումն Թուրքի, որ գթացեալ ի նա փախոյց. և իբրև ազդ եղև Դաւթի զերծումն նորին, մխիթարեցաւ ի սգոյն ։

65. Էր ընդ կոտորեալսն՝ նաև Պայլ զօրավարն, որդի մելիք Փարսադանին, որոյ պարանոցն կիսով չափ հատեալ ընկեցեալ էին ի բացի մերձ ի Խոտանան։ Ուստի յետ սակաւուց իբրև ուշաբերեալ լինէր. կալեալ ձեռօք զգլուխն ի վերայ իւր երթայր մտանէր ի մացառս վայրացն մինչև ցմութ գիշերոյն, և ի գիշերի յուղի անկեալ գայր, և յետ երից աւուրց ի Ջալիձոր հասանէր։ Եւ եղև սքանչացումն յոյժ ամենայն տեսողացն, զի ոչ մեռաւ. այլ կենդանի է մինչև ցայսօր, և է Մելիք ի Ջալիձորն ։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Թէ զիա՛րդ Օսմանցիքն եկին, և մտին ի Ղափան: Եւ թէ զիա՛րդ մարտեաւ պատերազմեցաւ Եղեան ընդ նոսա Դաւիթն և ամէն զօրականք նորա: Եւ թէ զիա՛րդ Մխիթար յաղթութիւն արարին ի նոսա:

1. Յամի Տեառն 1724, և ի թուին Հայոց 1173, Սուլթան Ահմէտն Օսմանցւոց, որ բռնակալեալ ունէր ի Պարսկական ծովոյն Ովկիանու մինչև ցԵդիպտոս, և ցԼիբիա, և անտի ցԼիւբիկէ, և մինչև ցբոլոր ծովն Պոնտոսի, և զմեծ մասն Հայոց, և զայլ բազում ազգս, և զԹագաւորութիւնս, և զիշխանութիւնս, և զաշխարհս նոցա, իբրև լսէր զվտարումն Պարսից արքային ի հայրենի աթոռոյն, խորհեցաւ զհարդ և իցէ պատճառանօք յինքն գրաւել զտէրութիւնն զայն:

2. Ուստի հրաման տայր իշխանի զօրուն, ելանել զօրաժողով լինել յամենայն աշխարհաց, և երթալ հասանել ի վերայ Պարսից, և ունել զքաղաքս նոցա: Եւ եկ նա ըստ հրամանի արքային անթիւ և



անհամար զօրօք ի կողմանս մեծին Հայոց, որ ի վիճակի Պարսից: Եւ ուր ուրեք հասանէին, ի սուր սուսերի սատակէին զամենայն դիմակացս իւրեանց, և զօրքն ամենայն գառնայլին բազում աւարաւ ամ յանձ, մինչև յղփացան փարթամացան, և լցին զամենայն քաղաքս և զգիւղս իւրեանց ի բազմութենէ աւարաց, և գերեաց ի Հայոց, և ի Պարսից: Բայց ո՞ կարէ պատմել զաղէտս մարց և տղայոց ի ձեռաց անօրէն գերչացն, և զնոցին հարց, և եղբարց անողորմ կոտորածն:

3. Արդ՝ սոքա իբրև այսպէս զօրացան ի կողմանս յայնոսիկ, և զմայրաքաղաքն Երևանայ յետ բազում ժամանակաց պաշարմանն առին, և զամենայն բնակիչսն ի սուր սուսերի մաշեցին: Ապա յամի տեառն 1726 և ի թուականութեան Հայոց 1175, անթիւ անհամար զօրօք ի Սիւնեաց աշխարհն մտեցան, և կալան յամենայն կողմանց զերկիրն Դաւթի, զԵօթնաբերդ գաւառն Խափանու:

4. Յայնժամ ամենայն բնակիչք գաւառին, առ հասարակ խռովեցան, սասանե-

ցան, թողին լքին զԴաւիթ, և գնացին մտին ընդ լծովն Օսմանցւոց ։ Եւ մնաց միայն Դաւիթ եօթնևտասն սպառազէն արամբ ի յանապատն Հալիձորոյ, ուր կանգնեալ էր զանառիկ բերդն ։ Ընդ նմա էին նաև երեք Եպիսկոպոսունք Տաթևու և երկոտասան քահանայք, զհետ գնացին նաև Տէր Աւետիսն, և Մելիք Փարսադան սակաւ ումամբք, զի զօրքն ամենեքեան թօթափեցան ի նոցանէ ։

5. Բայց Դաւիթ յայսմ ամենայնի ոչ լքաւ, ոչ կասեցաւ ի խորհրդոյն, ոչ զանգիտեաց ի բազմութենէ բարբարոսացն, և ոչ դադարեցաւ ի քաջագործութեանցն, և ոչ յուսահատեցաւ յԱստուածային խնամոցն ։ Այլ արիաբար զերդն ամրացուցանէր, զհամբար բերդին պատրաստէր, զզօրականս առ ինքն ժողովէր, բազմացուցանէր. և զԱստուածն ամենակարող յօգնութիւն ինքեան կոչէր ։

6. Արդ յամսեանն իններորդի յետ գալստեան Օսմանցւոց ի Խափան, որ այն հինգերորդ ամ էր գալստեան Դաւթի, եկին հասին ի Խափան ի Սուլթան Ահմատէն



Օսմանցւոց, Պէքիր փաշայն, և Երապ Ալի փաշայն, բազում զօրօք, ընդ ինքեանց առեալ նաև զԲաթալի Խանն Բարքուշատայ ։

7. Յետ այսորիկ, հրաման տային ի սեղեաց տեղեաց աշխարհին ամենայն զօրաւորաց Հայոց և Թուրքաց գալ ժողովել անդր. և եկին հասին առ նոսա յամենայն կողմանց՝ զօրք Թուրքացն, ընդ ինքեանս առեալ նաև զզօրսն Հայոց, ի Գողթան գաւառէն, ի յԱգուլիս քաղաքէն, ի յՕրդուվարայ, ի Փիխանայ, ի Բարքուշատայ, ի Զանգրու, ի Մեղրւոյ, ի Խափանու, այլ և զՂարաչօռլու կոչեցեալ Թուրքսն, և զբնակիչս Սեաւ լերինն, և սոքա ամենեքեան եկին գումարեցան, և եղեն իբրու վաթսուն կամ եօթանասուն հազար, և առաւել ևս բազում յոյժ, մինչև ընուլ բազմութեան հեծելոց և հետևակաց նոցա՝ զդաշտս և զլերինս ։

8. Եւ հանդէս արարեալ ամենայն զօրացն, կարգեցան, պատրաստեցան, զինեցին գալ ի վերայ Դաւիթ բեգին. և եկին բանակեցան յայնկոյս գետոյն հանդէպ Հա-

լիձորոյ, յերեքտասաներորդում աւուր քառասնորդաց պահոց: Իսկ որք ընդ Դաւթի էին զօրք, զայն ահագին բազմութիւնն յորժամ տեսանէին՝ զարհուրէին, և բազումք ի նոցանէ երթային առ փաշայն, և անձնատուրք լինէին: Բայց որք քաջք և արիք էին՝ խիզախէին, և ի մարտ պատերազմի պատրաստէին :

9. Եւ էջ բանակեցաւ Դաւիթ ի յամրոցէն ի շէնն, որ էր յայսկոյս գետոյն հանդէպ բանակի նոցա, և առաքեաց ընդ առաջ նոցա գունդ մի զօրաց հարիւր վաթսնից ի կալնուլ զանցս գետոյն, և եկին կալան, և ոչ թոյլ տային նոցա անցանել զգետն զաւուրս երկուս. բայց յաւուրն երրորդի թուանքաւորքն Հայոց, որք ընդ զօրս Օսմանցւոց էին, անցին զգետն յայլ ուստեքէ, և հասին կալան զմի կողմն շինին, և հատին զզօրսն Դաւթի :

10. Իսկ Դաւիթ, և զօրականքն իւր երեք հարիւր յիսուն արամբք մտին ամրացսն ի յամուրն Ընապատին : Եւ էանց յայսկոյս ամենայն բանակն Օսմանցւոց, և մատուցեալ շուրջ պահ արկին զբերդաւրն, և կանգնեցին զնովաւ պատնէշ, և անտի զգնդակս թօփից և թուանքաց ի ներքս հոսէին, և սոքա ի ներքուստ առ արտաքս զնոյն ի նոսին առնէին. և զաւուրս վեց մարտ եդեալ ընդ միմեանս կռուէին, և ի կողմանցն հակառակաց յաւուրն հարիւր, կամ երկու հարիւր, և երբեմն նաև երեք, կամ չորս հարիւր անկանէին, և ի սոցանէ հազիւ մի ոք, կամ երկու վասն ամրութեան տեղւոյն :



11. Բայց յաւուրն եօթներորդի ընդ այգն, ընդ առաւօտն, որք պաշարեալ պահէին զամուրն, կազմեցան, պատրաստեցան, և զինեալ մօտեցան ի պարիսպ անդր, այլ ոչ որպէս յերեկն և յեռանդն, զի զահագին մեծամեծ մեքենայս (ըստ կերպի մեծամեծ սանդղոց, թուով քսան և վեց) ընդ ինքեանց բարձեալ բերէին, գային մերձենային, և ի պարիսպ անդր յեցուցանէին, և բազմութիւն խուժանին յերկս խումբս բաժանէին, և յերից կողմանց զրոհ տուեալ ի մեքենայից անտի ի վերայ պարսպացն դիմէին :

12. Իսկ պահապանք պարսպացն ի վերուստ անտի հարեալ զնոսա, ի մեքենա-

ջիցն ի վայր թօթափէին, և բազմութիւն զէշագէշ անկելոց նոցին, իբր զվաղահասունն թզոյ հարեալք ի սաստկութենէ կարկտի զյատակս մեքենայիցն ծածկէին, և զայն ամենայն ոչինչ համարեալ, յառաւօտէ մինչև ցութերորդ ժամ աւուրն, մեծաւ գոչմամբ և տագնապաւ ի վերայ պարսպացն դիմէին ։

13. Ընդ էր տեսանել զայն ահեղ տեսիլ կատաղեալ զօրացն ազմուկ աղաղակին. զի իբրև զմեքենայսն կանգնեցին, հարիւրաւոր և հազարաւոր դրօշակակիրքն յառաջ խաղացին, ապա զօրքն ամենայն զկնի հեղանէին իբր յորձանս յորդախաղաց գետոյ ահագին գոչմամբ, և կամ իբրու ամեհի ալեա՛ծուփ յուզեալք ի բռնութենէ հողմոց դարիւ և դարիւ գային, մի զմիով անցանէին, և ի մեքենայից անտի ի վերայ պարսպացն դիմէին, և առհասարակ յերկոցունց կողմանց ձայն փողոյ, և ձայն թմբկաց, գոչիւն զօրաց շառաչիւն հրալից փնդակաց, ճայթմունք հրացանից զականջս խլացուցանէին ։

14. Իսկ որք ի ներքս էին, իբրև զայն ահեղ տեսիլ ի յամրոցէ անտի տեսանէին,



զփնդաց փնդաց այլասեռիցն, դրօշու դրօշու պատրաստութիւն, զնշանացն փողփողել, և զճառագայթս զինուցն զինուորաց. զզանգակս հնչեցուցանէին, զնշխարս սըրբոյն Մինասայ ի բազմոցի դնէին, և ամենեքեան անկեալ առաջի սրբոյ սեղանոյն առ Աստուած գոչէին, Եպիսկոպոսունք, Քահանայք և ամենայն ժողովրդականքն, և կուսանք (զի էր անդ նաև Մենարան ինչ կուսանաց, ուր բնակէին քառասուն, կամ յիսուն կուսանք,) զի ամենեքեան ըղմահն առաջի աչաց ունէին ։

15. Եւ ի յութներորդ ժամու աւուրն, իբրև տեսին, թէ բառնի այնուհետև յոյս կեցութեան, Մխիթար սպարապետն և Տէր Աւետիսն խրախոյս բարձին ի զէն յարձակեցան. յայնժամ զօրքն ամենեքեան առ նոսա կուտեցան, (բաց ի պահապանաց պարսպացն,) վառեցան պատրաստեցան, զէն զգեցան և ի բարկութիւն բորբոքեցան ամենեքեան ի վերայ թշնամեացն ։

16. Զի խօսիլ սկսան ընդ նոսա Մխիթարն, և Տէր Աւետիսն, և ասեն քաջացարուք, մի՛ երկնչէք, ելէ՛ք զհետ մեր, եթէ

հասեալ իցէ վախճան մեր, քաջութեամբ մեռցուք. զի լաւ լիցի մեզ արիութեամբ արտաքոյ պարսպաց մեռանիլ, քան աստէն առաջի աչաց մերոց, տեսանել զմահ ընտանեաց և բարեկամաց մերոց, և զայլ դժնդակութիւնս. զնոյն ասացին, և ինքեանք յառաջագոյն աճապարեցին ելին արտաքս ընդ գաղտնի դուռն պարսպին, և երեք հարիւր վառեալքն զկնի նոցա:

17. Ո՜վ սքանչելեացս, ո՜վ մեծի բարեգթութեանցն Աստուծոյ, զի երեք հարիւր (300) վառեալք ի յութերորդ ժամու աւուրն, ձայն ետուն խրախոյս բարձին, յարձակեցան միանգամայն ի վերայ եօթանասուն հազարաց (70000). առաջինն յանկարծակի յարձակեցան ի վերայ յաջակողմեան գնդի նոցա յաջ և յահեակ կոտորելով:

18. Իսկ նոքա յանկարծակի իբրև տեսին զայն ահեղ յարձակումն, և կոտորած ի վերայ ինքեանց հասեալ, առ հասարակ խռովեալք, և խուճապեալք դիմեցին ի յերկրորդ, և ի յերրորդ խումբն զաղաղակ բարձեալ թէ հասին՝ կոտորեցին ըզ-



մեզ քրիստոնեայքն, և զայն իբրև լուան ամենեքեան՝ հիացան, ափշեցան, ակարացան ի խորհուրդս իւրեանց, լքան, լուծան և անկաւ ահ ի Տեառնէ ի վերայ նոցա. զի մինչդեռ ակն ունէին մեծի յաղթութեան, զըռամբ ածելոյ զամուրն, յանկարծակի եհաս նոցա այն անողորմ կոտորածն:

19. Ուստի առ հասարակ զարհուրեալք, և սասանեալք ասէին այր ցընկերն, որ ոք կամի զանձն իւր ապրեցուցանել՝ փախստեան ուշ դիցէ. զի բազումք ի նոցանէ բազում անգամ զփորձ առեալք էին քաջութեանցն Դաւթի, և արանց նորա. և զի ահն, աղաղակն, և անհնարին կոտորումն բանակի նոցա երթալով երթայր, և զօրանայր, ուստի ոչ ոք այնուհետև համարձակէր յետս ընդդէմ սոցա դառնալ, այլ առ հասարակ խռովեալք, և խուճապեալք փախստեայ լինէին:

20. Իսկ սոքա և որք ի բերդ անդր մնացեալք էին համարձակ ի վերայ յարձակէին հասանէին, հարկանէին, զբազումս առ ետեղ սատակէին, և զայլս՝ խոցս, և

վէրս ի վերայ դնելով՝ հալածական առնէին անտի, մինչ ոչ թողուլ ի նոցանէ երկու ի միասին. և ի նմին անկան ի բանակէ Օսմանցւոցն երկոտասան հազար այր (12000) պատերազմող, իսկ ի սոցանէ յոյժ սակաւ ոմանք ։

21. Զի Աջ Ամենակալին հովանի, և պաշտպան էր նոցա յամենայն պատերազմունս, առ ի փրկել և կեցուցանել զնոսա, և զթշնամիս առաջի նոցա խորտակել. որպէս յայտնապէս տեսանի աստանօր, և ի յայլ բազում տեղիս. և առին ի նոցանէ յաւուր յայնմիկ հարիւր քառասուն և ութն դրօշակս, և զայլ ամենայն կապուտ կողոպուտ բանակի նոցա ։

22. Արդ իբրև ետես Դաւիթ, թէ Աստուած օգնական է ինքեան յամենայնի, խնդրէր այնուհետև տալ պատերազմ ընդ Օսմանցւոց, և հանել զնոսա ի Խափանու. և կամեցաւ նախ ելանել ի վերայ Մեղրւոյ ամուր աւանին. բայց իբրև գիտաց, թէ անդ է փաշայն Օսմանցւոց, ոչ համարձակեցաւ ելանել առ ժամն ։



23. Նա ի ժամանակին յայնմիկ յաւուրս Քառասնորդաց պահոցն, առաքեաց նա զՄխիթար սպարապետն, և Տէր Աւետիսն վաթսուն և վեց վառելովք առ Խանն՝ որ էր իշխան զօրուն Շահթամազայ, և ասէ ցնա՝ եկ միաբանեալ տացուք պատերազմ ընդ Օսմանցւոց. և եկին գտին զնա ի Գուղազ Քուրդաշեան կոչեցեալ աւանին, որ է յայնկոյս Երասխայ, հանդէպ յՕրդուվարայ, (զի յաւուրն յայնմիկ Շահ-Թամազն էր ի Թաւրիզ, և իշխան զօրուն ի կողմանս Երասխայ՝ ընդդէմ զօրացն Օսմանցւոց). և իբրև պատմեցին զբանսն Դաւթի, երկեաւ առնել զայն։ Բայց եղբայր նորին Լեվազու Խանն գուն գործէր հաւանեցուցանել զնա միաբանիլ ընդ Դաւթի ։

24. Նա մինչդեռ ընդ այս վիճէին, ի յՕրդուվարայ զօրք ելին քսան դրօշուք ի զօրացն Օսմանցւոց, և գնացին լցին զդաշտն Կարճեվանու. և ասեն Մխիթարն և Տէր Աւետիսն ցԽանսն, հապա դիմեսցուք ի վերայ նոցա. և ոչ կամեցաւ իշխանն զօրու ելանել ։

25. Յայնժամ եղեն չուեցին անտի երկոքեանքն վաթսուն և վեց արամբքն, և սակաւ ինչ պատահեալ զօրացն Օսմանցւոց անցին գնացին ի նոցանէ, և զօրքն Օսմանցւոց գնացեալ մօտին ի Մեղրի, և յաւելան ընդ զօրսն փաշային Մեղրւոյ և եղեն քսան և երկու հազար զօրք:

26. Եւ իբրև ընդ երեկս լինէր, Մխիթար սպարապետն, և Տէր Աւետիսն՝ Խանիցն Պարսից ազդ առնէին, թէ ի գիշերիս յայսմիկ հարկանելոց եմք մեք զՄեղրի, մեզ յօգնութիւն հասէք. (և նոքա առաքեցին միայն յիսուն վառեալս), և սկսան զզօրն կարգել, կազմել և պատուէր տալ նոցա, և ասել, զի ընդ այգն ընդ առաւօտն հասանիցեն ի վերայ Մեղրւոյ:

27. Եւ ինքեանք երկու ոմամբք գան հասանէին ի յայգեստանս Մեղրւոյ, և անդէն առ ինքեանս ժողովեն զամենայն փախստեայսն Մեղրեցւոց (որք միւսանգամ նեղեալք, և չարչարեալք ի դառն ծառայութենէ Օսմանցւոց թափառականք աստ և անդ ի լերինս շրջէին,) զամենեսեան զնոսա ժողովէին, կարգէին, կազմէին և ի գլուխն



Մեղրւոյ ի դարանի դնէին: Եւ ինքեանք սակաւ ոմամբք անտի գաղտաբար գիշերայն ծածուկ զինեալք ի Մեղրի մտանէին:

28. Եւ իբրև առաւօտ լինէր, զօրքն խուրեանց ոչ ժամանէին: Բայց զօրացն Օսմանցւոց իբրև ազդ լինէր, թէ զօրաժողով Հայքն արտաքոյ պարսպաց լինին, զգէն առին, ձի հեծան և պատրաստեցան ի պատերազմ:

29. Յայնժամ Մխիթար սպարապետն, և Տէր Աւետիսն, և որք ընդ նոսա էին, սուսերամերկք լինէին, ի մէջ բերդին յարձակէին, զհարկահանսն Օսմանցւոց՝ անդանօր սատակէին, և զայլս շտապ տագնապաւ առաջի տանէին. և իբրև զփաշայն ի փոքր թաղն հասուցանէին, անդէն ի վերայ հասանէին նա և դարանամուտքն ի գլխոյն Մեղրւոյ, և սկսան փախուստ առնուլ զօրքն Օսմանցւոց:

30. Յայնժամ Մխիթարն՝ Տէր Աւետիսն, և որք ընդ նոսա՝ իբրև տեսին, թէ ի վերայ հասին Օսմանցւոց նաև դարանամուտքն, թողին զնոսա, և անձապարեցին՝ հասին կալան ինքեանք զկիրճս ճանա-

պարհի նոցա, որ առ Երասխաւ էր, որ այժմ յայլազգեաց կոչի Ուզուն–պէնտ. և էր կիրճն այն երկայն ձգեալ իբր գնացս միոյ ժամու, կամ երկուց, որոյ մի կողմն էր քարաժայռ մեծ, և միւս կողմն Երասխըն յորդահոս։

31. Արդ՝ իբրև մտին փախստականքն Օսմանցւոց ի կիրճն, սոքա ընդ առաջ ելին նոցա պատերազմաւ։ Եւ նոքա իբրև տեսին, նեղեցան յոյժ, զի պաշարեցեալ միացին յամենայն կողմանց. և ստիպեցան անցանել ընդ գետն Երասխ։ Այլ սոքա ի վերայ հասին նոցա, զբազումս դիաթաւալ կացուցին, և զայլ բազումս ի գետն հեղձուցին։

32. Եւ անտի դարձ արարին և եկին հասին ի Մեղրի, և անդ գտին զանբաւ կառափունս Թուրքաց, զանհամար ձիս և զ ջորիս նոցա, զանչափ գոյս նոցա, իբր չորեք հարիւր տաղանդոյ ինչս, զբեռն հարկահանին բացին, և անդ երեսուն և երկու հազար թումանս հարկաց գտին, և զայն ամենայն ի հուրն այրեցին։ Եւ զԴաշտեցի Նորվէլն գտին, որ էր ուրացեալ զՔրիստոս, վասն այսորիկ զգլուխն հատին։



33. Ապա յետ այսորիկ իբրև սակաւ ինչ ժամանակ ի վերայ անցանէր, ասպատակիչ Փաշայն Օսմանցւոց բազում զօրօք դիմեր գայր, և ի Բէխ կոչեցեալ գիւղն բանակէր, և իբր զաւուրս միոյ շաբաթու բազում հնարս խորհէր ի վերայ Գաւթի և զօրականացն՝ որսալ զնոսա նենգութեամբ, և ոչինչ կարաց առնել ամենևին։ Այլ զօրականքն Գաւթի ի գիշերի միում ի վերայ հասին նոցա, հարին կոտորեցին ըզբազումս ի նոցանէ, և զփաշայն հալածական արարին։

34. Յետ այսորիկ գունդ մի զօրաց ութըն հարիւրոյ յՕսմանցւոց ի Բարքուշատ եկին, զի գնասցեն անտի ի Տաթև. և սոքա իբրև զայն զգացին, զգիշերայն ի յՕքուզխարաթ կոչեցեալ լեառն ելին, և զանցս ճանապարհին ըմբռնեցին։ Իսկ նոքա ընդ այգն ընդ առաւօտն իբրև եկին անդր հասին, սոքա ի վերայ յարձակեցան նոցա, հարին կոտորեցին ի նոցանէ երեսուն և վեց այր, զեօթն այր ևս գերեցին, և առեալ զամենայն ինչս նոցա դարձան ի Ղալիձոր։

35. Ապա այլ ևս զօրք Օսմանցւոց եկին բանակեցան ի գիւղ մի Թուրքաց մերձ ի Մանլև, զնոսա ևս ի գիշերի ի վերայ հասեալ կոտորեցին, և միայն զերկուս ի նոցանէ կենդանի ածին ի Հալիձոր:

36. Արդ՝ յամի տեառն 1727, որ այն հինգերորդ ամ էր գալստեանն Դաւթի ի Խափան, իբրև տեսանէր Դաւիթ բէգն ի վերին խնամոցն զթշնամին իւր յամենայն ուրեք յառաջի իւր վանեալս և խորտակեալս, առաքեաց Շահ-Թամազ արքային Պարսից զ չորս բեռինս գլխովք ըսպանելոց, ի բազմութենէ կոտորածին, զորս ի յՕսմանցւոցն կոտորեցին:

37. Եւ նա՝ իբրև զայն տեսանէր, ուրախ լինէր յոյժ ի վերայ սատակման թըշնամեացն իւրոց, և զարմանայր յոյժ միանգամայն և ի վերայ քաջութեանցն Դաւթի, և զօրականաց նորա: Ուստի զընծայս պարգևէր, հրովարտակս գրէր առ նա՝ ըստ բանիցս ըստ այսոցիկ:

38. “Շահ-Թամազ արքայ Պարսից
“առ քաջդ Դաւիթ բէգ, և առ քաջ զօ-
“րավարդ Հայոց, որք ընդ քեզ են՝ ողջոյն.



“ի բազմաց բազում անգամ ազդ եղև մեզ՝
“զքաջութեանց քոց. բայց արդ՝ իբր ա-
“կանատես իսկ եղեալ մեր զձերոց մեծա-
“մեծ քաջութեանց, որ ընդ դէմ թշնա-
“մեաց մերոց: Ահա արդ կացուցի զքեզ
“այսօր իշխանն, և գլուխ ամենայն իշխա-
“նաց մերոց, որք են ի կողմանսդ յայդո-
“սիկ. և երկիրդ Խափանու՝ զոր կալար
“քաջութեամբ, քեզ լիցի: Բայց դու եր-
“ցես, և ժողովեսցես առ քեզ զամենայն
“զօրս, և զԽանս ի կողմանցդ այդոցիկ,
“և ի բաց հանցես զՕսմանցին ի սահմա-
“նաց քոց“:

39. Եւ ետ բերել նմա զմի խաչվառ և զմի պատուական նժոյգ ձի, և ևս զիշխանութիւն կարող լինելոյ դրամ հատանել, և իւրաքանչիւր զօրապետաց նորա զմի մի պատմուճան առաքեաց: Եւ եկին հնազանդեցան նմա ամենայն իշխանք և գաւառապետքն Թուրքաց:

40. Յայնժամ ել գնաց Դաւիթ ի Հալիձորոյ ի Մեղրի, և բանակեցաւ անդ. և ժողովեալ առ ինքն զամենայն զօրսն ի Մեղրւոյ, և ի Զանգզրոյ, խաղաց գնաց

անտի, և բանակեցաւ ի Արծիվան աւանն. և հանդէս արարեալ անդ ամենայն զօրացըն՝ առաքէ զնոսա ի ձեռն քաջ զօրավարացն ի վերայ Օրդուվար քաղաքի ։

41. Եւ գնացին ի վերայ հասին քաղաքին ի գիշերային ժամու, և յարձակեցան ի մէջ քաղաքին ի կեղակարծ ժամանակի, և հարին կոտորեցին ի յՕսմանցւոցն երեք հարիւր այր, և մնացեալքն եղին փախեան ի քաղաքէն, և գնացին ի դիպուկ ինչ տեղւոջ արտաքոյ քաղաքին, և անդ բանակ առեալ բանակեցան ։

42. Եւ սոցա առեալ զաւարն, արկին սեղանս, զի կերիցեն, արբցեն, և ուրախ լիցին. յայնժամ գայ ի վերայ հասանէ Գաւլիթ մինչդեռ բազմեալ էին ի սեղան զօրավարքն, և ցասուցեալ ի վերայ նոցա՝ ասէ, Թշնամիքն ձեր արտաքոյ քաղաքիս բանակ առեալք բանակին, և դուք նստեալ ուտէք, և ըմպէք։ Եւ նոյն ժամայն թողեալ զուտելն՝ հեծան, կազմեցան և յարձակեցան ի վերայ բանակի Օսմանցւոց ։ Իսկ նոքա իբրև զայն տեսին, գիտացին թէ՝ զօրքն Պարսից է, և



եղեն ընդ առաջ ի մարտ պատերազմի. բայց իբրև զփորձ առին, գիտացին, թէ այն է՝ զօր Գաւլիթ բէգին՝ ի փախուստ դարձան ։

43. Եւ սոքա զբաղում ջոկս ձիոց, և ջորեաց ի նոցանէ առին, զայն ամենայն առ Գաւլիթ առաքեցին, և ինքեանք ի Գէշտ կոչեցեալ աւանն դիմեցին. իսկ արք աւանին ի հեռուստ իբրև զգալ զօրացն տեսին, համարեցան, թէ զօր այլազգեաց է այն, և փախուցեալ յԱգուլիս մտին ։

44. Եւ անտի չուեալ Մխիթար սպարապետն, և Տէր Աւետիսն հանդերձ զօրուն ի յԱգուլիս քաղաք դիմեցին ։ Եւ իբրև եկին ի մեծ դուռն քաղաքին հասին, պահապանք դրան ընդ տեսանելն զոսա՝ փախեան. և սոցա համարձակ մտեալ ի քաղաքն, երթան ի վաճառատեղն առ ի յոյզ և խնդիր առնել զՕսմանցիսն. և զըտանեն անտի փախուցեալ զհարկահանն Օսմանցւոց. և ինքեանք երթեալ բանակին ի վանս սրբոյն Թովմայի Առաքելոյն։

45. Եւ մինչդեռ անդ էին սոքա՝ լուան արտաքոյ աղմուկ շփոթի, և երկու ոմանք

ի սոցանէ ձի կալան, ելին արտաքս, և գիտացին զի ոմն ի թուրքաց յափշտակեալ զոմն՝ զերի վարէր, և պնդեցան զհետ նորա. և նորա թողեալ զգերին՝ փախեաւ:

46. Արդ՝ սակաւ ինչ կացեալ անդ, տեսին ի դիտանոցէն, զի Դաւիթ Բէգն եւս գայր մտանէր ի քաղաքն, և ելին ընդ առաջ նորա: Եւ նա զգեցոյց իւրաքանչիւր զինուորացն զմի մի պատմուճան, և դարձան վերստին բանակեցան արտաքոյ քաղաքին ի սուրբն Թովմայ: Իսկ արք քաղաքին ըստ սովորութեան իւրեանց, ամենքեան գային, և զձեռն Դաւիթ Բէգին համբուրէին:

47. Եւ Մելիք Մուսին (որ նա ինքն էր քաղաքապետն) իբրև գայր յանդիման լինէր՝ Դաւիթ իւրոցն հրաման տայր, և ասէր ի գիշերիս յայսմիկ հատէք զգլուխն Մուսեայ, զի այր նենգաւոր է նա և խարդախ. բայց Մելիք Փարսադան յառաջ մատուցեալ բարեխօս լինէր վասն նորա, և զվճիռ մահուն դարձուցանէր:

48. Եւ մնացեալ սոցա անդ ի միջոցի տասն աւուրց, երիցս անգամ յարձակեցան



զօրքն Օսմանցւոց ի վերայ նոցա, և երիցս խորտակեցան ի քաջամարտիկ զօրացն Դաւթի: Յետ այսորիկ և արքայն Պարսից ի թիկունս հասուցանէր Դաւթի զերիս Խանս, և Օսմանցին վերստին դիմէր, և դարձեալ խորտակիւր ի սոցանէ: Եւ այս ամենայն յայն սակս պատահէր նոցա, զի իշխանքն Ագուլեցւոց ծածկապէս դաշնադիրք էին ընդ Օսմանցւոց, և սոքա ոչ գիտէին:

49. Ապա յետ երկուց աւուրց եկին հասին բազմութիւն զօրացն Օսմանցւոց՝ և լցին զդաշտն Մարաղու, և անդ բաժանեցան յերիս առաջս, Խանքն Պարսից ի մի կողմն, և զօրքն Հայոց ի մի կողմն, իսկ Տէր Աւետիսն հանդերձ զօրուն դիպեցաւ ի կողմն Երասխայ: Արդ՝ իբրև խմբեցան ի պատերազմն, Խանքն Պարսից ի փախուստ դարձան յերեսաց Օսմանցւոցն. այլ զօրքն Հայոց պինդ կացին հարին սատակեցին զբազումս ի յՕսմանցւոց, և զայլսն ի փախուստ դարձուցին:

50. Ապա դարձան զկնի խանիցն պնդեցան, հասին նոցա (մինչդեռ փախստեայ

երթային նոքա ի Թաւրէզ ), և զամենայն զօրս նոցա ի յԱգուլիս դարձուցին. բայց Խանք փախեան, և սոքա գնացին աւար առին զտունս նոցա, և զտիկնայս նոցա հանդերձ ութուտասան աղախնեօք, և չորս ներքինեօք գերի վարեցին ի Ջալեձոր:

51. Արդ՝ յետ այսորիկ իբրև երկու աւուրք ի վերայ անցին, արքն Ագուլիսու, և Մելիք Մուսին զթշնամութիւնս իւրեանց և զդաւաճանութիւնս յայտ արարին, զի ի մէջ քաղաքին զրոհ տուեալ ի վերայ զօրացն Դաւթի դիմեցին, մինչդեռ ի վանսն էին նոքա սրբոյն Թովմայի արտաքոյ քաղաքին, և սկսան ի քաղաքէ անտի հրացանս արձակել ի վերայ զօրացն:

52. Այլ սոքա խնայեցին ի նոսա, վասն գոլոյն համազգի. և զի ոչ կամէին մատնել յարիւն այնքան քրիստոնէից, վասն զի ի քաղաքի անդ էին իբրու տասն հազար տունք Հայոց: Ուստի ել արտաքս Մելիք Փարսադան, և առէ ցարսն քաղաքին, ո՛րք եղբարք, հանդարտ լերուք, մի՛ ևս արձակէք հրացանս, թո՛յլ տուք, զի ելցէ տէրն մեր արտաքս, և գնասցուք աստի, և ձեզ



ոչինչ մեղիցուք. այլ նոքա առաւել ևս վատթար գոլով հարին, և անդէն զմիջնորդն խաղաղութեան մինչդեռ զխաղաղութեան բանս բարբառէր՝ սպանին զնա՝ որև զտէրն նոցա, այսինքն զՄելիք Մուսին ի մահուանէ ապրեցոյց:

53. Այլ՝ որք ընդ Դաւթի էին, իբրև զայն տեսին, գիտացին զի այնուհետև վճարեալ էր չարութիւն նոցա, քակեցին զմի կողմն պարսպի վանացն, և անտի չուեցին գնացին, և ի գիւղ մի Թուրքաց հասին. և անդէն զբազում ինչս Ագուլեցւոց զտին զձիս և զջորիս, և հազար երեք հարիւր ոչխարս սպանդանոցի, և զայն ամենայն, և զայլ բազում ինչս անտի առին, և գնացին ի Մեղրի:

54. Եւ յետ երկուց աւուրց, զօրականքն Դաւթի միւսանգամ ի յԱգուլիս արշաւեցին, և զամենայն, որ ինչ էր արտաքոյ քաղաքին՝ առին, և եկին մօտեցան ի քաղաքն, և յերկուց կողմանց հուր արկին, զի թերևս ելցեն արտաքս առ ի մարտնչել ընդ նոսա. զի ո՛չ կարէին հան-

դուրժել չարեացն, և դաւոց, զոր նոքա արարին. և իբրև ոչ ելին արտաքս առ նոսա, առին զաւարն; և գնացին ի Մեղրի, և անտի դարձան ի Հալիձոր և անդ օթեւանս կալան ։

55. Եւ յաւուրսն յայնոսիկ Դաւիթ բէգն առաքէ զՏէր Աւետիսն առ զօրականսն, որք էին ի Չաւնդուր ։ Եւ նոքա մերժեն զԴաւիթ, և ոչ ընդունին զբանս նորա ։ Եւ նա դառնայ գայ առ Դաւիթ, և զպատմութիւն նոցա յայտ առնէ Դաւթի, և թէ որպէս կացուցեալք են ի վերայ ինքեանց զոստիկանս յՕսմանցւոց ։

56. Յայնժամ հրաման ետ Դաւիթ չորեքտասան զօրաւորացն իւրոց, երթալ՝ կալնուլ զնոսա և կապեալս առ ինքն ածել. և ելին կազմեցան, պատրաստեցան, ձի հեծան, և գնացին հասին, հարին զնոսա, և կալան կապեցին զզօրավարսն, և զոստիկանսն Օսմանցւոց, և ածին կացուցին զնոսա ի Հալիձոր առաջի Դաւթի։

57. Եւ իբրև յանդիման եղեն նոքա, յառաջ մատուցեալ աղաչէին, երդմունս,



և դաշինս դնէին, և ասէին այսուհետև քեզ հնազանդ եմք մինչև ցմահ։ Եւ հաւատացեալ Դաւթի արձակեաց զնոսա ի կապանաց, և զերկու զօրավարսն առ ինքն եթող, և զայլսն ետ ի ձեռս Տէր Աւետիսին, զի լինիցին ի ներքոյ հրամանաց նորա. և նորա առեալ զնոսա տանի ի Չաւնդուր, և արձակէ զիւրաքանչիւրսն ի տունս իւրեանց ։

58. Եւ յետ այսորիկ Բաթալի Խանն, և զօրքն Օսմանցւոց ի գիշերի միում գան, և հարկանեն զերիս գիւղս Հայոց, և կալեալ զերիս զօրապետս ի Բարքուշատ ածեն ։ Եւ իբրև զայն լսէր Տէր Աւետիսն, վաղվաղակի զզօրսն ժողովէր, և յետ երկուց աւուրց յերկիրն Բարքուշատայ արշաւէր, և գիշերայն ի վերայ հասանէր, հարկանէր զհարուածս մեծամեծս, և զերկու Թուրք զօրապետսն ձերբակալ առնէր, և զամենայն ինչս և զստացուածս նոցա աւար ածէր ի Չաւնդուր ։

59. Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հիւանդանալ Դաւթի, և մեռանիլ իսկ

խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալի-ձոր, յամի տեառն 1728, և ի Թուականութեանն Հայոց 1177, կացեալ ամս վեց յիշխանութեան իւրում ի Խափան:

60. Արդ՝ իբրև վախճանեցաւ Դաւիթ բէգն, զօրականքն մնացեալք կացուցին ի վերայ ինքեանց իշխան, և գլուխ զՄխիթար սպարապետն Դաւթի:

61. Բայց զի յետոյ եղեն անմիաբանք, և տարաձայնք յիրերաց, (որ է քակտիչ, և ապականիչ ամենայն հասարակութեանց) ուստի զօրացան ի վերայ նոցա Օսմանցի-քըն, և զկնի միոյ ամի հասին՝ պաշարեցին զբերդն Դաւթի բազում զօրօք: Եւ անկաւ խռովութիւն մեծ ի մէջ զօրականացն, որք ընդ Մխիթարայ էին ի բերդի անդ: Եւ առաքեցին երկու ոմանք զՏէր Աւետիսն առ փաշայն Օսմանցւոց խօսիլ ընդ նոսա զխաղաղութիւն, և իբրև գնացին առ նոսա, նոքա հաճեցան հաւանեցան, և երդուան ամենեւին ոչինչ մեղանչել նոցա. և պահեցին առ ինքեանս զտէր Աւետիսն. և սոքա ևս յանձն առին ի փաշէն անդր բանալ նոցա զդուռն բերդին. և



ի նմին գիշերի փախեաւ Մխիթարն ի պարըսպէ բերդին:

62. Եւ յորժամ այդ եղև, բացին նոցա զդուռն. այլ անօրէն զօրքն Օսմանցւոց իբրև ի ներքս մտին, մերժեցին անարգեցին զերդմունս, և դաշինս փաշային, և զամենայն այր զօրաւոր կոտորեցին, և զկանայս, և զմանկունս գերեցին, ի մենարանըս կուսանաց մտին, և զամենեսեան գերի վարեցին. ապա զպարիսպս բերդին քակեցին, կործանեցին, հարթ և յատակ արարին. և առեալ զկին և զորդիսն Մխիթարայ, և զամենայն որ ինչ էր անդ՝ գնացին:

63. Բայց զտէր Աւետիսն փաշայն եթող ի Հալիձոր: Եւ իբրև նոքա չուեցին անտի, այլ զօրք Օսմանցւոց անդր հասին. որք իբրև կամեցան ունել և սպանանել զնա, նորա փախուցեալ ի նոցանէ անկաւ առ փաշայն. որոյ հրամանաւ առեալ զընտանիսն, գնացեալ բնակեցաւ յԵրուսաղէմ. և յետ բազում ապաշխարանաց էառ զներումն ի Սրբազան Պատրիարքէն Հայոց, հաճութեամբ և համաձայնու-

թեամբ Տէր Աբրահամ Սրբազնագոյն Կա-
թուղիկոսի ամենայն Հայոց *)։

(*) Զարմանամք թէ Հայր Միքայէլ վարդա-
պետն Չամչեանց (Հատ. Գ. գլ. ԽԹ. երես 800).
ուստի՞ գիտացեալ՝ կամ յո՞րպիսի աղբերաց առեալ՝
վստահանայ ինքնատեղծ պատմութեամբ յօրի-
նել զնոր իմն սովորութիւն Ազգիս, գրելով ի պատ-
մագրութեան իւրում՝ թէ "Իսկ Տէր Աւետիքն
առեալ զընտանիս իւր՝ չոգաւ ի Գաղատիա, և
անտի գնացեալ յարևմուտս, եառ զներումն ի
Ծայրագոյն Քահանայապետէն Հռովմայ. վասն
մղելոյ նորա զայնչափ պատերազմունս ի Քահանա-
յութեան իւրում. ըստ որում սովորութիւն էր
ազգին՝ յայնպիսի մեծամեծ իրս դիմել ի դուռն
Հռովմայ,, ևն։

Վասն զի՝ ցարդ՝ ոչ ոք ի մերոց կամ յօտա-
րաց իսկ զայնպիսի սովորութենէ Ազգիս պատմա-
գրեցին ինչ — բաց ի Հ. Միքայէլ Վարդապետէ
Չամչեանց. Այլ բուն իսկ բարեպաշտ սովորու-
թիւն Ազգիս և Ազգային աւանդութիւն էր միշտ՝
և է այսօր իսկ, յայնպիսի նշանաւոր դէպս՝ դիմել
ոչ երբէք ի Հռոմ, այլ յատկապէս առ Եպիսկո-
պոսունս վիճակացն և միջնորդութեամբ նոցին առ
Վեհափառ Կաթուղիկոսն ամենայն Հայոց, ի Ս.
Էջմիածին կամ առ Սրբազան Պատրիարքն Հայոց
յԵրուսաղէմ վասն թողութեան երևելի ինչ յան-
ցանաց, որպէս և Տէր Աւետիսն իսկ։ Ծան. Հրատ.



64. Այլ Մխիթարն փախուցեալ ի նո-
ցանէ երթայր վերստին զօրաժողով լինէր,
զզօրսն Օսմանցւոց խորտակէր, և առնոյր
զվրէժ ի նոցանէ, զաղբուռամուրս, և զքա-
ղաքս ի նոցանէ թափէր. ապա երթայր
զՕրդուվար քաղաք պաշարել, և իբրև զբռ-
ռամբ ածէր զայն, ի նոցանէ զամենեսեան
ի սուր սուսերի սատակէր. և զաւար բա-
զում յոյժ առեալ ի նոցանէ զհարիւր
վաթսուն բեռինս ուղտուց, և անտի չուեալ
երթայր ժամանակ ինչ ի մեծ բերդն Խըն-
ծորէկք բնակէր։

65. Եւ անդ յիւրոցն հարեալ թոփով
մեռանէր, յամի Տեառն 1730, յետ եր-
կուց ամաց իշխելոյն. զի նա յօրէ յորմէ
հետէ ի Խնծորէկք բնակէր, ասէին ցնա
Հայ բնակիչքն, ե՛լ գնա՛ աստի ի յամուրն
քո, և նա ոչ լսէր նոցա։

66. Ուստի յաւուր միում հարին զնա,
և սպանին, և հատեալ զգլուխ նորա ա-
ռին գնացին ի Թաւրէզ առ փաշայն Օս-
մանցւոց։ Իսկ նա իբրև ետես՝ զարմացաւ
յոյժ, և սկսաւ սրտմտիլ յոյժ ի վերայ
այնպիսւոյ անօրէնութեան նոցա. և ասէ,

ով անօրէնք և ամբարիշտք, զիա՞րդ իշխե-
ցէք ի զուր տարապարտուց սպանանել ըզ-
տէրն ձեր, և զայդպիսի քաջ այր. և հրա-
մայեաց հատանել զգլուխս ամենեցուն նո-
ցա, որք տարան զայն, և ըստ արժանեացն
հատոյց նոցա զհատուցումն:

67. Արդ նոքա զայսպիսի մեծ անօրէ-
նութիւնս գործեցին, թերևս վասն այսո-
րիկ, զի մի՛ զկիրս Ղալեձորոյ կրեսցեն ի
յՕսմանցւոցն, որպէս և նոքա կրեցին,
վասն արգել լինելոյ անդ Մխիթարայ: Իսկ
զօրքն ամենեքեան ցրուեցան, և ոմանք ի
նոցանէ գնացին առ Յովհաննէս իշխանն
Գուգարացւոց, և այլքն յայլուր:



Եւ յաւարտ բանիս ասեմք, թէ չար
է արդարև, և դժնդակ չար անմիաբանու-
թիւնն ընկերաց ի մէջ հասարակութեան,
և նախադասելն զբարին, և զօգուտն իւրոյ
անձին՝ քան զբարին հասարակութեան,
և յորում հասարակութեան և գտանիցի
չարս այս, առժամայն եղծէ, ապականէ, և
ընդունայնացուցանէ՝ զհասարակութիւնն
զայն, թէ տուն իցէ, թէ քաղաք, թէ ազգ
իցէ, և թէ անպարտելի թագաւորութիւն
մեծ, զի՞նչ մեծագոյն քան զԱյսերու-
թիւնն Մակեդոնացւոց, և Հռոմայեցւոց,
և ընդէ՞ր կորեան և կործանեցան. վասն զի,
պակասեցաւ ի նոցանէ Միաբանութիւնն և
Սէրն հասարակութեան, որով և զօրա-
ցեալ իսկ էին, . . . . . . . . .
. . . . . . . : Զի որպէս միաբա-
նութիւնն հոգի է և կեանք ամենայն հա-
սարակութեան, նոյնպէս և հակառակն սո-
րին, այսինքն անմիաբանութիւնն եղծիչ
է, և սատակիչ ամենայն հասարակու-
թեան:

Արդ՝ ողորմեցաւ արդարև Աստուած ամենայն տանն Արշակայ որդւոյն Գեղամայ ի յայնպիսի դառն ժամանակի, (յորում տագնապէին ամենայն բնակիչք Հայաստանեայց յերեսաց հանապազօր սրոյ, սովու, գերութեան և ըլկանաց.) յարուցանելով նոցա զԴաւիթ բէկն, և զայլ ամենայն որդիս զօրութեանց, որք զօրացան և ի բաց վանեցին զամենայն ապականիչս երկրին իւրեանց. ո՜վ թէ որպէս քաջացան, ընդդէմ ելին մեծամեծ թագաւորաց, և այրեցան, և անպարտելի մնացին նոքա զթութեամբ վերին խնամոցն, մինչդեռ միաբանք էին ի միասին: Բայց իբրև եհաս առ նոսա ապականիչ ախտս այս անմիաբանութեան, իսկոյն եղծան, լուծան, բաժանեցան, և եղեն իբրև ոչեղեալս: Զի մեռաւ Դաւիթ, ի քաջութենէ, որոյ սարսէին ամենայն բռնակալք յուսացեալքն ի զօրութիւնս իւրեանց, և յաջորդեաց Մխիթարն, վերջին մխիթարիչն Հայոց. որ իբրև կորիւն առիւծու. գոչեաց ի լերանցն Սիւնեաց, և ի նմանէ սասանեցան ամենայն գազանք ի մորիս իւրեանց,



և էջ և յափշտակեաց զյափշտակութիւն ի միջոյ գազանաց: Եհար՝ խորտակեաց զեղջիւրս հպարտաց, հատոյց զհատուցումն եօթնապատիկ ի գլուխս թշնամեաց, և յամօթ արար զմեծամեծս հեթանոսաց, և յաւար էառ զփառս նոցա առ ի մխիթարել զազգն Հայոց ողջոյն:

Այլ դառն անօրէնք ի մէջ ժողովրդեանն, որք ախտացեալ իսկ էին այսու ժանտ ախտիւս անմիաբանութեան. վասն որոյ անօրէն խորհրդովք ընդունայն, և սընոտի պատճառանօք իշխեցին սպանանել զառաջնորդն իւրեանց, և մերժել զպարգևսն, և զողորմութիւնսն Աստուծոյ ի հասարակութենէ իւրեանց, և եղեն կամաւ ստրուկ օտարաց որպէս և յառաջն, որք մինչև ցայժմ մնացին . . . .

. . . . . . . . ., եթէ սակաւ մինչ ևս ժամանակ ժուժկալեալք էին, մինչև անցանիցէր բռնութիւնն Օսմանցւոց, մանաւանդ զի Աստուած օգնական էր նոցա՝ յամենայն պատերազմունս, և զի ոչ պակասէին նոցա անառիկ և ամուր տեղիք:

ԱՆՈՒԱՆՔ ԶՕՐԱՊԵՏԱՑՆ ԵՒ ԶՕՐԱՑՆ ԴԱՒԹԻ

Ի ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԻՍ.

Այսոքիկ էին զօրավարք և զօրապետք Դաւիթ բէգին, մինչ էր ի յամուրն Շէնհէր. Մխիթարն, մեծ Գորգին Վրացի, Յովհաննէսն, Բանդուր Զաքարիա իշխանն, Պայինդուր իշխանն Վրացի. (արդ սոքա Վրացի ասին, ըստ որում էին յերկրէն Վրաց, այլ ոչ ի յազգէ նոցա. վասն զի Դաւիթ և ամենայն զօրավարք իւր էին ի յազգէ Հայոց Լուսաւորչական,) դարձեալ Աւթանդիլն, փոքր Գորգին, Նօատուրն, Գարակեօղն, Թադէոսն, Եղիազարն, Յարութիւնն, և այլն, այսքան զօրօք: Որք ի Շէնհէր բնակէին քաջ զօրավարքն Դաւթի էին այսոքիկ, Պայինդուր զօրապետն, Պապի զօրապետն. Մինասն, Ստեփաննոսն, և ընդ նոսա 550 զօրք: Որք ի Տաթև էին այսոքիկ, Գիջին, Այոին, Եսային, Տիրացուն, Սիմէօնն, և ընդ նոսա 400 զօրք: Եւ մելիք Փարսադանն ի Հալիձոր երկիրն էր 250 արամբք: Այլ և



Տէր Աւետիսն ի նոյն Հալիձոր էր 463 արամբք. այս Տէր Աւետիսն արար զբազում մեծամեծ քաջութիւնս, որպէս և ի պատմութիւնս իսկ տեսանի. զի էր կարի քաջ, և արիասիրտ, և զօրաւոր յոյժ բանիւք, և գործովք. և վասն այսորիկ նա՝ յորմհետէ հեռացեալ ի հայրենի երկրէն պանդխտեցաւ յԵրուսաղէմ, բազումք յորդորէին զնա ի հայրենի նորին գաւառէ, անդրէն դառնալ առ նոսա, և պաշտպան լինել երկրին. բայց նա հրաժարէր յաղագս պատուոյ Քահանայական կարգին: Ի Զավընդուր գաւառին էին այսոքիկ զօրավարք՝ այսինքն՝ Թորոսն, Պայինդուրն, Նուբարն, Վարդանն, Փարսադանն, Թովմասն, Թուրինջն, Յովհաննէսն, և ընդ նոսա 2000 զօրք: Ի Կալէր էր Պապ զօրագլուխն, և ընդ նմա 700 զօրք: Իսկ Ստեփաննոս Վարդանէսեան, որ ի տանէն Շահումեան, էր տեղակալն և սպարապետն Պապայ, և էր սիրելի յաչս Դաւթի, վասն իւրոյ քաջութեան, և ազնուականութեանն. ուստի ետ նմա յետոյ, նաև զիշխանութիւն, և զկալուածս երից Մե-

լիքաց։ Եւ ի Մեղրի էին այսոքիկ, այսինքն Կոստանդին, Յովհաննէսն, Սարին, Առաքէլն, և ընդ նոսա 400 զօրք. սոքա զդէմ կալան ութուտասան հազար զօրացն ի յամուր աւանն Մեղրւոյ, և ի գիշերի միում սակաւուք ի վերայ յարձակեցան ութուտասան հազարաց, և ետուն նոցա զմեծամեծ հարուածս։

Յետ այսորիկ որդիքն Մաղաջուղին և Տիլէնչի մականուանելոյն էին 400 արամբք։

Զօրավարն Սիսական էր 500 արամբք։

Մելիք Գուջուն էր 200 արամբք։

Աւշար Երէցն, որ և կոչի Տէր Գասպար՝ էր 250 արամբք։

Ադամ զօրավարն Գաղաբերդին էր 150 արամբք։

Գաղար զօրավարն Կուլեբերդին էր 110 արամբք։

Սարգիս զօրավարն Շխմանուձորոյ էր 250 արամբք։

ՎԵՐՋ։

# ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

# ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

«ԼԵՒՈՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՔԱՅԻՆ ՀԱՅՈՑ»
Մահուան վրայ մի քանի տեղեկութիւնք,
հանդերձ թարգմանութեամբ:

Ի ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ԽԱՉԱՏՈՒՐ ԴՊՐԻ ԱԲՈՎԵԱՆ:

*Письма Русскаго Путешественника, т. е. Г. Карамзина. 1790 г. въ Парижѣ. Печатный Москва. 1801 г. мѣсяца мая. Въ Университетской Типографiю.*

Въ страницѣ 282. пишетъ такимъ образомъ, что въ Церкви Келестиновъ, гдѣ много картинъ и памятниковъ между прочими монументъ *Леона Царя* Армянскаго, что Царь Армянскiй, который будучи изгнанъ изъ земли своей Турками, умеръ въ Парижѣ 1393 году. Фрусаръ современный Историкъ объ немъ говоритъ слѣдующее. "Лишенный трона, сох-
"ранилъ онъ Царскiя добродѣтели, и
"еще прибавилъ къ нимъ новое, ве-
"ликодушное терпѣнiе, съ благодѣте-

"лемъ своимъ, Карломъ VI обходил-
"ся какъ съ другомъ, не забывая соб-
"ственнаго Царскаго сана; и смерть
"Леона была достойна жизни его,,.

Ի Նամակագրութենէ Ռուսաց ճանապարհորդու-
թեանն Պարոն Կարամզինեայ, յամի 1790.
ի Փարիզ:

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Որ էր տպագրեալ ի Մոսկով, ի Տպարանի Համալսարանին, յերեսս 282, գրրեալ այս օրինակ թէ՝ յեկեղեցւոջ Կելեստինու՝ ուր էին բազմութիւնք պատկերաց և արձանաց, էր ընդ նոսա և յիշատակարան Լևոնի արքային Հայոց՝ որ հալածեալ գոլով ի Թուրքաց, մեռաւ ի Փարէզ ի 1393 ամին: Գրեալ ժամանակակից Պատմագիրն շուրջ զնովաւ խօսի զհետագայս:

,,Երկեալն յաթոռս, պահպանեաց Ար-
,,քայական առաքինութիւնն, և յաւել
,,ևս առ այն՝ զնոր մեծահոգի համբերու-



,,թիւն, ընդ բարերարին խրում Կարլո-
,,սի վեցերորդի կենցաղավարէր իբրև ընդ
,,բարեկամի ումեք, ոչ մոռանալով զսեպ-
,,հական զարժանապատուութիւնն Ար-
,,քայական, ուստի և մահն Լևոնի եղև
,,արժանավայել կենաց նորա:

Զսոյն զայս սակաւամասն հատուած բանի՝ արտահանեցի ի Ռուս բնագրէ անւի թարգմանութեամբ հանդերձ: Ի 1826 ամին յ3 ամսեանն Նոյեմբերի, ի սուրբ Նշանի Վանս՝ որ ի Հաղբատ:

Խաչատուր դպիր Աբովեան
Քանաքեռցի:

## ՅԱՒԵԼՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

### "ՀՆԴԵԿԻՆ ՀԱՐՈՒԱԾՔ ՏՓԽԻՍԱՑ".

ԳՈՐԾ ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ՍԵՐՈՎԲԷ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՊԱՏԿԱՆԵԱՆ:

Այս պատուական յօդուածը, թէ և մենք խոստացել էինք մեր հրատարակած Յայտարարութեան մէջ, տպագրել իբրև Բ. Յաւելուած այս մատենիս մէջ, բայց դժբաղդաբար մի քանի հանգամանաց պատճառաւ, չկարողացանք արտագրելով տպագրել այստեղ, որի համար շատ ենք ցաւում: Վերջապէս, թէ և մեզ արգելառիթ պատահելով, չկարողացանք միաւորել այս տասնեւօթներորդ դարու Սիւնեաց Պատմութեան մէջ, այնու ամենայնիւ խնդրումեմ խոնարհաբար մեր սիրելի ընթերցողաց, որ բարեհաճեն ընթեռնուլ այս պատուական և միանգամայն ուշադրութեան արժանի Յօդուածը, „Երգք Սերովբէ վարժապետի Պատկանեան„ անուանեալ գրքումը, երես 33, 34, 35 և 36, տպեալ ի Մոսքուա, 1857 ամի ի լոյս ածեալ՝ Գ. Աւետիքայ Խաչիկեանց: Ա-



ւելորդ չեմ համարում յիշել այստեղ յօդուածի վերջերից մի քանի խօսքը: Որ ինչ ժամանակ Աստուածանշան սուրբ Գեղարդն մխեալ ի կողն Յիսուսի Քրիստոսի, մեծաւ հանդիսիւ բերումէին յէջմիածնէ ի Տփխիս, անդ այսպէս կ'նկարագրէ . . "Յորժամ զէնն Աստուածա-
,,յին եմուտ ի քաղաքս, ամենայն զէնք
,,նախաչարին թուլացան, սուսեր նորա
,,ընդ մէջ բեկաւ, լարք աղեղանց նորա
,,խզեցան, սլաքք ի նմին, ժանկահար կո-
,,րեան. երախակալք սրոյ՝ որ ի ձեռս հրեշ-
,,տակաց նորա՝ կապտեցան. նիզակք սրի-
,,կայից նորա՝ խորտակեցան և տէգք ար-
,,բանեկաց նորա փշրեցան. և ինքն զա-
,,մօթի հարեալ՝ գլխակոր մերժեցաւ յար-
,,տաքին խաւարն ի տարտարոս սանդարա-
,,մետին . . . . . . ,,:

Վերջապէս ինչպէս տեսնում ենք, ամեն ցաւալի դիպուածների և հարուածների մէջ եղել են Վրաստանցւոց հետ նաև մեր վշտալի Հայերը, որոնք որ ամեն վիշտք, տառապանք, և նեղութիւնք միշտ կրած են . . . . խեղճ Հայեր, ան-

բաղդ եղբայրներ . . . . ողորմելի՜ ազգ . . . :

Վերջապէս ամեն զգայուն սրտերի տխրութիւնը առաւել բազմապատկում է, և հետևեալ եռանդոտ սրտէ ոգեալ ,,ի վրդովմանն Հայաստանի,, սրտաշարժ Ողբն (յաւելուած Գ.), որը մեր այս հրատարակութեան նիւթին յարմար գոլով, աւելորդ չհամարեցինք արտագրել **Արարատ** պատուականագոյն ամսագրից և տպագրել աստ, որի համար հրապարակաւ յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը ,,Արարատի,, **Մեծապատիւ Խմբագրութեանը**, որ բարեհաճում է միշտապէս այսպիսի ազնիւ եռանդով, և զգայուն սրտով գրուածքը հրատարակել, հաղորդելով նոցա՝ Հայաստանի ծարաւեալ հարազատ որդւոցը . . . :

**Ա. Գուլամիրեանց:**



# ՅԱՒԵԼՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

## ՈՂԲ

### ԳԷՈՐԳԵԱՅ ԻՇԽԱՆԻ ԽՈՒԲՈՎ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆ Ի ՎՐԴՈՎԱՆՍՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԲԱԼՈՎ ՈԳԵԱԼ:

Ի բազմանալ մեղաց մերոց, իշխանքն մեր վերջացան,
Արթուն հովիւք եւ իմաստունք, յԱզգէ մերմէ սպառեցան.
Կարգք օրինաց սուրբ հաւատոց եւ իրաւանց քակտեցան,
Երկիւղ Տեառն եւ ամօթ մարդկանց բարձեալ իսպառ մերժեցան.
Ուստի ի մէնջ ապերջանկացս, բիւր բարութիւնք հեռացան.
Եւ զանազան անթիւ չարիք ի գլուխս մեր կուտեցան:
Գեղապարդեալն յոյժ բարելի, վայելչաբուղխն Հայաստան,
Աւաղ լլկեալ անշքացեալ եղեւ անձ վայաստան.
Զ' ի բազմութեանց բարբարոսաց, փոխեցաւ ի Պարսկաստան,
Եւ ողբալի բնակչաց նորին թողեալ զայգի եւ զբուրաստան.
Ոմանք փրեալք յանօրինաց, վարին ի խոր հեռաստան,

Եւ կէսք սատոյց սրով մաշեցան, եւ այլքն են ի Վրաստան:

Էջմիածին Աթոռն համուրց, որ էր պարծանք Հայկազեան,
Աւերեցաւ անմարդաբնակ, եղեւ զողոց օթարան.
Լուսակառոյց տունն Աստուծոյ, այլազգեաց է բնակարան.
Եւ փոխան սուրբ մանկանց նորին, բուք բունեալք՝ վայ վայ կարդան.
Ամենայն սիրտ ի տրտմութեան, եւ գլուխք ի ցաւս նեղեալ կան:
Զի սպեղանիք ո՛չ օգնեցին, ոչ ձէթ եւ ոչ բնաւ պատան:
Ո՞ւր են զարդք սուրբ վանօրէից, որք ի սրբոց կառուցան,
Յորս դամբարանք սքանչելարարք ի հարց անտի եդեալ կան.
Ընդ որս պայծառ եկեղեցիք, արժանիք յոյժ հիացման,
Որք զարմանաձեւ յօրինմամբ, երկնասարաս հիմնեցան.
Հրեշտակային օրհնութիւնք ի նոցունց զիա՞րդ բարձան,
Որդեկորոյս լեալ քան զՀռաքել անմխիթարն Հայաստան:

Արարատ Ամս. Ը. Դեկտեմ. 1868, եր. 113:



# ՑԱԻՆԼՈՒԱԾ ՁՈՐՐՈՐԴ

## ԱԶԳԱՑԻՆ ՎԻՃԱԿԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ
## ԵՒ
## ՆՈՐԱ ՑԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ
## ԿԱՄ
## ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

Մեր ընդհանուր Հայոց Ազգի այժմեան և ապագայ վիճակը մանրամասնաբար դիտելու ժամանակ՝ յիրաւի՛, չեմ կարծում որ ամեն ճշմարիտ Հայ աչքերից՝ արտասուաց կաթիլները հեղեղի նման վազելէն պիտի դադարին,—պատճառ, եթէ ճշմարիտ սրտով նայենք նրանց վերայ և մարդկային իրաւունքով դատենք, ո՜հ, այն ժամանակը անշուշտ կատաղութիւններ և ցնդումներ պիտի յառաջ գան . . . . . այն մանուկը — այն էակը, որին Ամենաբարի Աստուած բանական ստեղծեց հեռացնելով միանգամայն անբաններից տալով նորան առատաբար ազնիւ սիրտ, ճարտար միտք և գեղեցիկ զգացմունք, այժմ ի՞նչ դրութեան մէջ կ'գտնենք նորանցից

մեր խե՜ղճ Հայերին . . . .— եթէ ոչ ողբալոյ արժանի վիճակի մէջ . . . . ո՜հ, աւա՜ղ, ասա և անդ թափառական ընկած, ձեռքերը կուրծքերնին դրած, անգործունեայ, և վերջապէս իբրև անզգայ, անհոգ մնացած, չնայելով որ զրկուած են բոլոր յառաջադիմութիւնից, կարօ՛տ անգամ շատերը, կարող եմ ասել մի կտոր սև հացի ևս, որոնց որդւոց այժմեան և ապագայ վիճակը դառնութեամբ և հեծութեամբ պիտի անցնին. յոյսերը կտրուած և կեանքի թելերը կարճացած, դէպի գերեզմանների խորքերը պիտի թաւալին, (ա՛խ խե՜ղճ եղբայրներ) . . . Ի՞նչ է արդեօք սրանց պատճառը սիրելի՛ ընթերցող, որ այսպէս զրկուած են և պիտի զրկուին աշխարհիս բարօրութիւնները վայելելուց . . . . . : Գու՛, սիրելի՛ ընթերցող մի քայլ յառա՛ջ ընթացիր և պարզ խորհրդածութեամբ մտածի՛ր մեր այս դարաւոր յետադիմութեան պատճառը, ուր կ'ներկայանան մարդկային ազգի յառաջադիմութեան, լուսաւորութեան, և հարստութեան արգելառիթները, . .



. . այնէ՝ առելի ողխոութիւնը, և ցաւալի աղքատութիւնը . . . որոնց փըրկելու և հեռացնելու համար, բոլոր Հայերիս ամենասրբազան պարտականութիւն է միշտ մտածել, խորհել և կշռել, որոնցով պիտի դարման և հոգ տանուի օ՜ր աւուր յառաջ տանելու Ազգը:

